ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1 Վարքագծի կանոններ

1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը

1.4 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման կառուցակարգերի ներդրում

1.5 Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդում

2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում

2.2 Աջակցություն հայտարարատուներին,

2.3 Ներկայացված հայտարարագրեր

2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

3.3 Հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքում իրականացված վարույթներ

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ

4.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

4.4 Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում

4.5 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացում

5.ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ
5.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների հիման վրա ներկայացված հաղորդումներ և զեկուցագրեր
6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ
7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ
8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և հասարակական շրջանակը
8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը, հաղորդակցություն
9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ
9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ
9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ
9.3 Կրթական էլեկտրոնային հարթակ
10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից բարեվարքության համակարգի տարրերի պահպանմանը հետևելու լիազորությունը, ինչը պայմանավորել է Հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղությունները 2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում էականորեն աճել է բարեվարքության համակարգի տարրերին առնչվող դիմումների և մեդիա հրապարակումների, ինչի արդյունքում նաև՝ դրանց հիման վրա իրականացված ուսումնասիրությունների թիվը: Այսպես, 2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում բարեվարքության համակարգի տարրերի (անհամատեղելիության պահանջներ, շահերի բախում, վարքագծի կանոններ, նվերների ընդունման սահմանափակումներ, այլ սահմանափակումներ) առնչությամբ Հանձնաժողովում իրականացվել է 131 ուսումնասիրություն: Ի համեմատություն սրա՝ ամբողջ 2024 թվականի ընթացքում իրականացվել է 120 ուսումնասիրություն: Հաշվետու ժամանակաշրջանում նկատվել են բարեվարքության տարրերի հետ կապված հետևյալ հիմնական միտումները՝

- շահերի բախման առնչությամբ հարկ է նկատել, որ իրավակիրառ պրակտիկան նախորդ տարվա համեմատ փոխվել է, մասնավորապես, շահերի բախման հնարավոր իրավիճակներում (այդ թվում՝ կապված գնումների գործընթացների հետ) պաշտոնատար անձինք նախքան որոշման կայացումը կամ գործողության կատարումը սկսել են դիմել Հանձնաժողով՝ հայցելով շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված Հանձնաժողովի առաջարկը, ինչը թույլ է տալիս շատ դեպքերում ընդհանուր գործընթացները դարձնել առավել թափանցիկ՝ Հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա ապահովելով գործընթացիհրապարակայնությունը:
- վարքագծի կանոնների առթիվ հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում էականորեն աճել է Հանձնաժողով ներկայացված դիմումների և կատարված ուսումնասիրությունների թիվը, ինչը հնարավորություն է ընձեռել Հանձնաժողովին զարգացնելու վարքագծի կանոնների կիրառման պրակտիկան և դրանց մեկնաբանությունները: Միաժամանակ, հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովի կողմից արձանագրված առերևույթ խախտումները հիմնականում վերաբերել են վարքագծի միևնույն կանոններին, ինչպես և 2024 թվականի ընթացքում, մասնավորապես՝ հանրային հաղորդակցությանը և հրապարակային խոսքին, այդ թվում՝ սոցիալական ցանցերով

հաղորդակցության շրջանակներում բարեկրթության և հարգալիրության դրսևորմանը:

➢ նվերների ընդունման սահմանափակումների պահպանման առնչությամբ հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աճել է նվերների հաշվառման գործընթացի հետ կապված դիմումների և գրությունների թիվը: Դրանք մեծամասամբ վերաբերել են նվերների գնորոշմանը, ինչպես նաև առկա իրավակարգավորումների պարզաբանմանը: Հարկ է նկատել, որ չնայած նվերների հաշվառման ռեեստրի կառուցման առկա մարտահրավերներին՝ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակված էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով իրականացվել է պաշտոնատար անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը: Հաշվառված նվերների թիվը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը շուրջ երկու անգամ:

1.1 Վարքագծի կանոններ

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տեղայնացում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների միասնականության ապահովման լիազորությունը: Սույն լիազորությունն անմիջականորեն բխում է հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների սահմանման և դրանց հետագա տեղայնացման օրենսդրական պահանջից:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Տիպային կանոններ) հիմք են հանրային ծառայության առանձին տեսակների համար վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման համար: Հանրային ծառայության առանձին տեսակները ղեկավարող մարմինները, ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում, կարող են սահմանել վարքագծի ոլորտային կանոնագրքեր:

Վերոգրյալի շրջանակներում՝ Հանձնաժողովը 2025 թվականի առաջին կիսամյակում ուսումնասիրել է հանրային ծառայության առանձին տեսակների վարքագծի կանոնագրքերի առկայության հանգամանքը, ինչպես նաև առկա վարքագծի կանոնագրքերի համապատասխանությունը Տիպային կանոններին:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ էկոպարեկային, քրեակատարողական ծառայողների և դատական կարգադրիչների վարքագծի կանոնները դեռևս չեն ընդունվել, իսկ պրոբացիայի ծառայողների վարքագծի կանոնները (ընդունված 2024 թվականին) և դիվանագետի վարքագծի (էթիկայի) կանոնները (ընդունված 2019 թվականին) էականորեն չեն համապատասխանում Տիպային կանոններին ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումով: Ըստ այդմ, Հանձնաժողովը գրություններ է հասցեագրել իրավասու պետական մարմիններին՝ խնդրելով մշակել կամ լրամշակել նշված ծառայության տեսակների վարքագծի կանոնագրքերը՝ Տիպային կանոններին համահունչ: Իրավասու մարմինները նախաձեռնել են նշված կանոնագրքերի մշակման կամ լրամշակման գործընթաց, ինչի շրջանակներում Հանձնաժողովը տրամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն: Կանոնագրքերի նախագծերը ենթակա են առաջիկայում ներկայացման Հանձնաժողովին՝ Տիպային կանոններին դրանցով սահմանվող նորմերի համապատասխանությունը որոշելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը Տիպային կանոններին համապատասխանության վերաբերյալ դիրքորոշում է տրամադրել Ներքին գործերի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանի նախագծի վերաբերյալ:

Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովին վերապահված է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) ընդունելու լիազորություն:

Սույն լիազորության շրջանակներում Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունել է Կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 1-ից: Կանոնագիրքը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հայերեն և անգլերեն տարբերակներով, ինչպես նաև իրավական տեղեկատվական arlis համակարգում:

Կանոնագրքով սահմանված նորմերի չպահպանումը օրենքով սահմանված դեպքերում առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոններին վերաբերելի մեդիա հրապարակումների և Հանձնաժողով հասցեագրվող դիմումների թվի աճ: Այսպես, Հանձնաժողովը իրականացրել է վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների վերաբերյալ 20 ուսումնասիրություն, որոնցից 11-ը՝ դիմումների հիման վրա, 7-ը՝ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, 1-ը՝ դիմումի և ԶԼՄ հրապարակման, ևս 1-ը՝ ԶԼՄ հրապարակման և մեկ այլ վարույթի իրականացման ընթացքում առերևույթ խախտման հայտնաբերման հիման վրա (նշած երկու դրվագները ներկայացվում են առանձին՝ նկատի ունենալով, որ դրանց վերաբերյալ ուսումնասիրությունները կատարվել են միաժամանակ երկու հիմքով): Ի համեմատություն սրա՝ ամբողջ 2024 թվականի ընթացքում Հանձնաժողովը ստացել էր 8 դիմում և իրականացրել 10 հրապարակման ուսումնասիրություն:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովին ներկայացված դիմումների և մեդիա հրապարակումների ուսումնասիրության արդյունքում հարուցվել է վարքագծի կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ 7 վարույթ, այդ թվում՝ 1 դիմումի հիման վրա ընդունվել է վարույթ հարուցելու և դիմումը մասնակի մերժելու վերաբերյալ որոշում, իսկ 5 դիմումի հիման վրա ընդունվել է վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ պայմանավորված առերևույթ խախտման բացակայությամբ կամ Կանոնագրքի սուբյեկտների շարքից պաշտոնատար անձանց դուրս լինելու հանգամանքով: Մեդիա հրապարակումների հիման վրա իրականացված 5 ուսումնասիրության արդյունքում վարույթներ չեն հարուցվել՝ 3 դեպքում՝ առերևույթ խախտումների վերաբերյալ բավարար փաստական հիմքերի բացակայությամբ պայմանավորված, իսկ 2 դեպքում՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նախապայմանների (խախտման համակարգային բնույթ կամ հանրային մեծ հետաքրքրության առկայություն) բացակայությամբ պայմանավորված:

Հաշվետու ժամանակահատվածում հարուցված վարույթներից 4-ն առնչվել են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտմանը, 2-ը՝ վարչական պաշտոն զբաղեցնող անձի կողմից, 1-ը՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է վարքագծի կանոնի խախտման առկայության 1 եզրակացություն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի վերաբերյալ և խախտման բացակայության 5 եզրակացություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի, նույն տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարի, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավարի տեղակալի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի վերաբերյալ: Նշված եզրակացությունները

հասանելի են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումներով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/04/00-31.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/04/00-29.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/06/00-12.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/06/Եզրակացություն-Սլավիկ-Սարգսյան.pdf:

Վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով ևս 4 վարույթ գտնվում է ընթացքի մեջ:

Հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում շարունակական են եղել վարքագծի կանոնների համակարգի միասնականության ապահովման տեսանկյունից նախկինում արձանագրված մարտահրավերները, մասնավորապես՝ համայնքի ավագանու անդամների, համայնքային վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց և Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների բացակայությունը:

Պաշտոնատար անձանց նշված խմբերի համար վարքականոնների սահմանմամբ հնարավոր կլինի ամբողջացնել վարքագծի կանոնների միասնական համակարգը և ապահովել բոլոր սուբյեկտների կողմից վարքագծի կանոնների խախտումների համակողմանի և արդյունավետ քննությունը:

1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

Հանձնաժողովը 2025 թվականի առաջին կիսամյակում շարունակել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դիմումների և մեդիա հրապարակումների ուսումնասիրությունը և պարզաբանումների տրամադրումը: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ընդհանուր թվով 126 դիմում և մեդիա հրապարակում: Եվս 5 դեպքում ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների արդյունքում վերհանված վերաբերելի տվյալները: Ուսումնասիրված մեդիա հրապարակումների ընդհանուր թիվը կազմել է 23: Եվս 1 ուսումնասիրություն իրականացվել է միաժամանակ մեդիա հրապարակման և դիմումի հիման վրա, իսկ մեկ այլ ուսումնասիրություն՝ մեդիա հրապարակման և վարույթի նյութերի հիման վրա, որոնցից առաջինը գծապատկերում արտացոլված է դիմումների թվում, իսկ երկրորդը՝

«այլ» խմբի ներքո: 103 ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել այլ պետական մարմիններից և քաղաքացիներից ստացված դիմումները:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիներից և պետական մարմիններից ստացված դիմումների և գրությունների հիման վրա իրականացված թվով 103 ուսումնասիրությունից 24-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 45-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 16-ը՝ վարքագծի կանոնների, 11-ը՝ նվերների ընդունման սահմանափակումներին, 2 դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է այլ սահմանափակումներին, ևս 5 դիմում՝ Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ:



Մեդիա հրապարակումներ

Հաշվետու կիսամյակում ուսումնասիրված հրապարակումներից 1-ը վերաբերել է անհամատեղելիության պահանջներին, 15-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 9-ը՝ վարքագծի կանոններին, որոնցից մեկը ուսումնասիրվել է նույն դեպքին վերաբերվող դիմումի հետ համատեղ, իսկ մեկ այլ հրապարակում՝ նույն դեպքի վերաբերյալ Հանձնաժողովի այլ վարույթի նյութերի հետ համատեղ:



Շահերի բախման վերաբերյալ

Շահերի բախման վերաբերյալ իրականացվել է թվով 15 ուսումնասիրություն, որից 7-ի դեպքում Հանձնաժողովի կողմից արձանագրվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման հիմքեր: Երեք դեպքով Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է համապատասխան վարույթ, ևս 4 հրապարակման հիման վրա Հանձնաժողովը որոշում է կայացրել վարույթ նախաձեռնելու վերաբերյալ, որոնք ընթացքի մեջ են:

1. *«Ալավերդու համայնքապետարանը 8,8 մլն դրամի պայմանագիր է կնքել ՔՊ-ական ավագանու անդամի հետ՝ հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով», «Hetq.am» լրատվական կայք, 6 հունվարի, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ Ալավերդու համայնքապետարանը 2024 թվականի հունվարի 9-ին պայմանագիր է կնքել նույն համայնքի ավագանու անդամ Արտակ Գևորգյանի հետ՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ: Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի, «Գնումների մասին» օրենքի և Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10 N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման կարգավորումների համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Ալավերդի համայնքի ղեկավար

Դավիթ Ղումաշյանը 2024 թվականի հունվարի 9-ին համայնքի կարիքների համար ծառայության ձեռքբերման պայմանագիր է կնքել իր հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ նույն համայնքի ավագանու անդամ Արտակ Գևորգյանի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ հետ:

Հանձնաժողովը գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ արձանագրել է, որ պահպանված են եղել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջները և ընթացակարգերը, հետևապես, խնդրո առարկա պայմանագրերի կնքումը քննարկվել է միայն Հանձնաժողովին շահերի բախման մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու համատեքստում:

Վերոգրյալի շրջանակներում արձանագրվել է, որ Դավիթ Ղումաշյանը Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն, թեև որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով, կրել է այդպիսի պարտավորություն:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ մեկ այլ՝ «Հետք» լրատվականի «Ալավերդու համայնքապետարանը 3.8 մլն դրամի պայմանագրեր է կնքել ավագանու անդամի մոր ԱՁ-ի հետ» վերտառությամբ հրապարակման հիման վրա Հանձնաժողովը նախաձեռնել է վարչական վարույթ՝ սույն հրապարակման առարկան քննարկվել է ավելի վաղ ուսումնասիրված հրապարակման հետ համատեղ: Հանձնաժողովի՝ 2025 թվականի փետրվարի 25-ի ՎԻՎ/59/2025 որոշմամբ Դավիթ Ղումաշյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ իր հետ փոխկապակցված անձի հետ անձնական հարաբերությունների մեջ գտնվող անձի՝ Ալավերդի համայնքի ավագանու անդամ Ա. Դալլաքյանի մոր՝ Մ.Դալլաքյան ԱՁ-ի հետ գնման պայմանագիր կնքելու համատեքստում շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չներկայացնելու հիմքով: Այնուամենայնիվ, Արտակ Գևորգյան ԱՁ-ի հետ պայմանագրի կնքման շրջանակներում նույն հիմքով հայտարարություն չներկայացնելու դեպքով առանձին վարչական վարույթ չի իրականացվել՝ հաշվի առնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված վարչական տույժի կիրառման ժամկետները:

2. *«2 տարում 2.7 միլիարդ դրամի գնում՝ ավագանու անդամի ընկերությունից. Սևան համայնքի ասֆալտապատման գնումները», «Infocom.am» լրատվական կայք, 15 հունվարի, 2025 թ.:*

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ 2020-2024 թվականներին Սևան համայնքում ճանապարհաշինարարական աշխատանքների իրականացման համար կազմակերպված 19 գնման ընթացակարգերից 17-ում աշխատանքները պատվիրակվել են համայնքի ավագանու անդամ Արմեն

Ալավերդյանի ընկերությանը՝ «Ճան Շին» ՍՊԸ-ին, իսկ մյուս 2-ը՝ համայնքի Ծովագյուղ բնակավայրի վարչական ղեկավար Ատոմ Սիմոնյանի հոր ընկերությանը՝ «Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊԸ-ին: Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է իրականացված գնումների ընթացակարգերի և համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում: Ներկայացված դեպքերում գնման ընթացակարգերի առերևույթ խախտումներ չեն արձանագրվել, այդուհանդերձ, դրանք քննարկվել են համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի, այլ բաց տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Սարգիս Մուրադյանը, որպես Սևան համայնի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2023 և 2024 թվականներին կապալային աշխատանքների և ճանապարհների նորոգման աշխատանքների ձեռքբերման 5 պայմանագիր է կնքել «Ճան Շին» ՍՊ ընկերության հետ, որի գործադիր մարմնի ղեկավարը, իրական շահառուն և 49 տոկոս բաժնետեր է հանդիսացել Սևան համայնքի ավագանու անդամ Արմեն Ալավերդյանը: Հանձնաժողովն արձանագրել է, որ Սևանի համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը ԳՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-2024/1/1, ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2024/3/1, ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2024/1/1, ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2023/2/1, ԳՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-2023/2/1 ծածկագրերով գնման պայմանագրերը կնքել է իր հետ փոխկապակցված անձի՝ նույն համայնքի ավագանու անդամ Արմեն Ալավերդյանի հետ փոխկապակցված ընկերության՝ «Ճան Շին» ՍՊԸ-ի հետ, որի կնքման շրջանակներում համայնքի ղեկավարը պարտավորություն է կրել շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնելու Հանձնաժողով, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի կարգավորումների խախտման: Նշվածի առնչությամբ՝ Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 1-ին ընդունել է Ս. Մուրադյանի նկատմամբ վարչական տույժ կիրառելու վերաբերյալ ՎԻՎ/77/2025 որոշումը: Հրապարակման մյուս դրվագով Հանձնաժողովն արձանագրել է, որ Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը 2023 թվականին կապալային աշխատանքների ձեռքբերման ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2023/1/1 ծածկագրով գնման պայմանագիր է կնքել Ծովագյուղ վարչական շրջանի ղեկավար Ատոմ Սիմոնյանի հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ վերջինիս հոր մասնակցությամբ և նրա կողմից ղեկավարվող «Ծովագյուղ ՃՇՇ» ՍՊ ընկերության հետ: Հարկ է նշել, որ գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ արձանագրել է, որ պահպանված են եղել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջները և ընթացակարգերը, հետևապես, խնդրո առարկա պայմանագրի կնքումը քննարկվել է միայն Հանձնաժողովին շահերի բախման մասին

գրավոր հայտարարություն չներկայացնելու համատեքստում: Այդուհանդերձ, հաշվի առնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով վարչական տույժ նշանակելու սահմանված ժամկետի անցած լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովի կողմից նշված դեպքը վարչական վարույթի առարկա չի դարձվել:

3. *«Ավինյանի ֆուտբոլային ընկերը շահում է պետական մրցույթները», «Hraparak.am» լրատվական կայք, 4 փետրվարի, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ «Լիլանարմ» ՍՊԸ-ն, որի տնօրեն է հանդիսացել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ Երևանի 2023 թվականի ավագանու ընտրությունների թեկնածուն և Տիգրան Ավինյանի ընկերը, մասնակցել և հաղթող է ընտրվել Երևանի քաղաքապետարանի կողմից պատվիրված գնման գործընթացներում:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի, այլ բաց աղբուրների ուսումնասիրության, ինչպես նաև հայտարարագրման համակարգի տվյալների ուսումնասիրությամբ պարզել է, որ Ն. Պողոսյանը «Լիլանարմ» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է հանդիսանում 2023 թվականի հունիսի 12-ից: Երևանի քաղաքապետի՝ 2018 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 3407-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցներով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար գնումները համակարգող է սահմանվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությունը, իսկ պատվիրատուի ղեկավարի լիազորությունները՝ պայմանագրի կնքման և գնման ընթացակարգի արձանագրության հաստատման մասով, վերապահվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետին, ուստի Երևանի քաղաքապետարանի և «Լիլանարմ» ՍՊԸ-ի միջև պայմանագրերի կնքմանը Երևանի քաղաքապետարանի կողմից մասնակցել է քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետը: Երևանի քաղաքապետը նշված գործընթացներում ուղղակի մասնակցություն կամ ներգրավվածություն չի ունեցել, ինչի պարագայում միայն Հանձնաժողովը հնարավորություն կունենար քննարկման առարկա դարձնել վերջինիս կողմից շահերի բախման իրավակարգավորումների առերևույթ խախտման հարցը: Միաժամանակ, բաց աղբյուրների ուսումնասիրությամբ Տ. Ավինյանի և Ն. Պողոսյանի միջև առերևույթ փոխկապակցվածության վերաբերյալ տեղեկություններ չեն գտնվել/հաստատվել: Հանձնաժողովը վարույթ հարուցելու հիմքեր չի արձանագրել:

4. *«Լոռի բերդի համայնքապետարանը 21.3 մլն դրամի պայմանագիր է կնքել համայնքի ղեկավարի առաջին տեղակալի եղբոր ընկերության հետ», «Hetq.am» լրատվական կայք, 2 փետրվարի, 2025 թ.:*

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Լոռի Բերդ համայնքի կազմում ընդգրկված Բովաձոր, Կողես, Լեջան, Յաղդան և Ուռուտ բնակավայրերի համայնքային կենտրոնների ամբողջական վերանորոգման և բարեկարգման համար համայնքապետարանը 2023 թվականի հուլիսին գնանշման հարցում ընթացակարգով իրականացված գնման ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Լոռշին» ՍՊ ընկերությունը, որի հետ 2023 թվականի օգոստոսի 1-ին կնքվել է գնման պայմանագիր՝ ընդհանուր 21 304 000 ՀՀ դրամ արժեքով: Այս ընկերության հիմնադիր և միակ բաժնետեր է հանդիսանում Վահագն Պապիկյանը՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վահրամ Պապիկյանի եղբայրը: Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի, այլ բաց տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Լոռի բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը N ԼՄԼԲՀ-ԳՀԱՇՁԲ-23/07 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի օգոստոսի 1-ին պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր է կնքել իր հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ իր առաջին տեղակալ Վահրամ Պապիկյանի եղբոր մասնակցությամբ ընկերության՝ «Լոռշին» ՍՊԸ-ի հետ:

Գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ պահպանված են եղել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջները և ընթացակարգերը, հետևապես, պայմանագրի կնքումը քննարկվել է միայն Հանձնաժողովին շահերի բախման մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու համատեքստում: Վերոգրյալի շրջանակներում արձանագրվել է, որ Արայիկ Ներսիսյանը Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն, թեև որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, «Հանրային ծառայության մասին» օրենքով կրել է այդպիսի պարտավորություն: Այդուհանդերձ, հաշվի առնելով վարչական տույժ նշանակելու սահմանված ժամկետի անցած լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովի կողմից նշված դեպքը վարչական վարույթի առարկա չի դարձվել:

Միաժամանակ, Հանձնաժողովը շահերի բախման հետագա իրավիճակների կանխարգելման նպատակով գրավոր դիմել է համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանին՝ հորդորելով հետագա գնման գործընթացներում շահերի բախման իրավիճակի առաջացման դեպքում նախապես դիմել Հանձնաժողովին:

5. *«Մարզպետն իր բաջանաղի ընտանիքի բոլոր անդամներին աշխատանքով ապահովելուց զատ, որոշել է նաեւ մարզ եկած ծրագրերն էլ բաջանաղով անել», «Aravot.am» լրատվական կայք, 5 փետրվարի, 2025 թ.:*

Հրապարկման համաձայն՝ 2025 թվականի հունվարի 17-ին Իջևանի համայնքապետարանի ավագանու նիստում կայացվել է 2 որոշում՝ «Օկոն» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպությանը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) ութ տարի ժամկետով համայնքային 2 հողամասի տրամադրման վերաբերյալ: Ըստ հրապարակման՝ 2023 թվականին ստեղծված «Օկոն» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպության նախագահը Իջևանի համայնքապետի խորհրդական Դավիթ Վիրաբյանն է, ով նաև Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ ունի խնամիական փոխկապակցվածություն:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ «Օկոն» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպությանը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) ութ տարի ժամկետով համայնքային 2 հողամասի տրամադրումը իրականացվել է համայնքի ավագանու որոշումների հիման վրա: Միաժամանակ, Հանձնաժողովը քննարկել է հրապարակման առարկան համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում: Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումները և հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունները, դիմել է համայնքի ղեկավարին՝ առաջարկելով «Օկոն» հասարակական կազմակերպությանը սահմանափակ օգտվելու իրավունքով համայնքային հողամասերի տրամադրման որոշումների հաստատումից առաջ, պայմանավորված կազմակերպության նախագահի՝ Դավիթ Վիրաբյանի հետ առկա փոխկապակցվածությամբ, հանդես գալ շահերի առկայության մասին հայտարարությամբ՝ հրապարակելով այն համայնքապետարանի պաշտոնական կայքէջում: Ինչ վերաբերում է Դ. Վիրաբյանի և Տավուշի մարզպետ Հ. Ղալումյանի միջև հրապարակմամբ հիշատակված խնամիական կապին՝ հասարակական նշված կազմակերպությանը համայնքային հողամասերի օգտագործման տրամադրման որոշումների կայացման գործընթացում Վ. Ղալումյանը պաշտոնե որևէ ներգրավվածություն կամ մասնակցություն չի ունեցել:

6. *«Շուրջ 135 միլիոն դրամի գնում՝ համայնքապետի ընտանիքին պատկանող ընկերությունից. Գավառ համայնքի գնումները»*, *«Infocom.am» լրատվական կայք, 7 փետրվարի, 2025 թ.:*

Համաձայն հրապարակման՝ Գավառի համայնքապետարանը համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ընկերության՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ի հետ 2020-2024 թվականների ընթացքում կնքել է համայնքի կարիքների համար գնման 8 պայմանագիր: «Գավառտրանս» ՍՊ ընկերության հետ ևս 15 պայմանագիր է կնքել «Գավառ համայնքի կոմունալ

սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ը: Գավառի համայնքապետարանը 2022-2024 թվականներին 7 պայմանագիր է կնքել համայնքի ղեկավարի տեղակալ Մուրադ Մովսիսյանի հորը պատկանող «Ֆավորիտ-Մ» ընկերության հետ, իսկ 2022 թվականին պայմանագիր է կնքել իշխող խմբակցության ավագանու անդամ Ալիկ Մարտիրոսյանի եղբոր՝ Ավետիք Մարտիրոսյանի՝ «Արմավ-700» ընկերության հետ:

Գուրգեն Մարտիրոսյանը հանդիսացել է նաև Հանձնաժողովի կողմից 2024 թվականին իրականացված՝ հանրային համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց, այդ թվում՝ համայնքի ղեկավարների անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման սուբյեկտ: Մշտադիտարկման ընթացքում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2024 թվականին Գավառ համայնքի և «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի միջև կնքվել է գնման պայմանագիր: Պայմանագրի կնքման պահին ընկերության մասնակիցներ են հանդիսացել վերջինիս որդիները, քույրը, քրոջ որդին, ինչպես նաև նույն համայնքի ավագանու անդամ Հրայր Գուլաբյանը: Վերջինս հանդիսացել է նաև ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: Պայմանագրի կնքման շրջանակներում Գուրգեն Մարտիրոսյանը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չի ներկայացրել: Գուրգեն Մարտիրոսյանի և «Գավառտրանս» ՍՊ-ի միջև 2024 թվականի փետրվարի 13-ին կնքված ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-24/2 պայմանագրի առնչությամբ Հանձնաժողովը սույն թվականի փետրվարի 13-ին կայացրել է վարչական տույժ կիրառելու մասին ՎԻՎ/15/2025 որոշումը:

Եվս 6 պայմանագիր Գավառի համայնքապետարանի և «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի միջև կնքվել են 2020, 2022, 2023 թվականներին: 2020-2022 թվականներին «Հանրային ծառայության մասին» օրենքով իմպերատիվ պահանջ չի եղել Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու: Համապատասխան իրավակարգավորումներն ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 2-ից, հետևապես, 2020-2022 թվականներին կնքված պայմանագրերի համատեքստում Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել քննելու նշված դեպքերը շահերի բախման կարգավորումների խախտման համատեքստում: Ինչ վերաբերում է 2023 թվականին կնքված երկու պայմանագրերին՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պայմանագրի կնքման պահին գործող իրավակարգավորումների պայմաններում պարտավոր էր Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն նախքան պայմանագրի կնքումը, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համապատասխան պահանջների խախտման: Այդուհանդերձ, հաշվի առնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված

վարչական տույժի կիրառման ժամկետները՝ Հանձնաժողովը սույն դեպքում վարույթ չի հարուցել:

Հրապարակման հաջորդ դրվագով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկի (նախկինում՝ ՀՈԱԿ-ի) կարիքների համար 2020-2024 թթ. կնքված պայմանագրերի կողմեր հանդիսացել են հիմնարկի տնօրենը՝ Յուրիկ Մինասյանը և ՍՊԸ-ի տնօրեն Հրայր Գուլաբյանը, իսկ նկարագրված հանգամանքների ուսումնասիրությամբ համայնքի ղեկավարի կողմից շահերի բախման իրավիճակ չի բացահայտվել, ուստի հիմնարկի գործադիր մարմնի շահերի բախման դեպքերի քննությունը, հաշվի առնելով Հանձնաժողովին վերապահված լիազորությունները, Հանձնաժողովի իրավասությունների տիրույթից դուրս է:

Հրապարակման մեկ այլ դրվագի ուսումնասիրմամբ Հանձնաժողովը պարզել է, որ Գավառ համայնքի կարիքների համար Գավառի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի, 2022 և 2024 թվականներին գնման պայմանագրեր է կնքել «Ֆավորիտ-Մ» ընկերության հետ, որի 100 % մասնակից 2022 թվականից հանդիսացել է Սամվել Մովսիսյանը՝ Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Մուրադ Մովսիսյանի հայրը: Հաշվի առնելով, որ 2022 թվականին Մուրադ Մովսիսյանը չի հանդիսացել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ, Հանձնաժողովը քննության է առել միայն 2024 թվականին կնքված 4 պայմանագրերը: Հաշվի առնելով, որ համայնքի ղեկավարի տեղակալի շահերի բախման քննության հարցը դուրս է Հանձնաժողովի իրավասության տիրույթից՝ Հանձնաժողովն անդրադարձել է գնման գործընթացին համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում: Ըստ այդմ՝ արձանագրվել է, որ Գուրգեն Մարտիրոսյանը գնման 4 պայմանագիր է կնքել իր հետ փոխկապակցված անձի՝ իր տեղակալ Մուրադ Մովսիսյանի հոր բաժնեմասնակցությամբ ընկերության՝ «Ֆավորիտ-Մ» ՍՊԸ-ի հետ: Վերոգրյալի շրջանակներում համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն, թեև որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով, կրել է այդպիսի պարտավորություն: Այդուհանդերձ, վերոնշյալ պայմանագրերի շրջանակներում Հանձնաժողովը որոշել է վարչական իրավախախտման հիմքով առանձին վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով, որ խնդրո առարկա պայմանագրերը կնքվել են նախքան Հանձնաժողովի՝ 2025 թվականի փետրվարի 13-ին կայացրած վարչական տույժ կիրառելու մասին թիվ ՎԻՎ/15/2025 որոշման ընդունումը:

Հրապարակման վերջին դրվագի ուսումնասիրմամբ պարզվել է, որ 2022 թվականին Գավառի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի, N ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-22/05 գնման պայմանագիր է կնքել «Արմավ-700»

ՍՊ ընկերության հետ: Ընկերության 2022 թվականից ընկերության 100 % մասնակից հանդիսանում է Ավետիք Մարտիրոսյանը՝ Գավառ համայնքի ավագանու անդամ Ալիկ Մարտիրոսյանի եղբայրը: Միաժամանակ, պայմանագրի կնքման պահին գործող իրավակարգավորումների պայմաններում ավագանու անդամը չի հանդիսացել համայնքի ղեկավարի հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձ, ինչպես նաև առկա չի եղել Հանձնաժողովին համապատասխան հայտարարություն ներկայացնելու իմպերատիվ պահանջ: Նշվածից ելնելով՝ սույն դրվագը վարույթի առարկա չի դարձվել:

7. *«Վաղարշապատի քաղաքապետը 13.6 միլիոն դրամի պայմանագիր է կնքել սկեսրայրի հետ», «Azatutyun.am» լրատվական կայք, 8 փետրվարի, 2025 թ.:*

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարԴիանա Գասպարյանը 13.6 միլիոն դրամի պայմանագիր է կնքել սկեսրայրի՝ անհատ ձեռնարկատեր Աշոտ Միրզոյանի հետ՝ սեղմված բնական գազի ձեռքբերման համար:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, տեղեկատվական շտեմարանների, գնումների տեղեկագրի, ինչպես նաև հայտարարագրման համակարգի և այլ բաց տվյալների ուսումնասիրության հիման վրա պարզել է, որ Վաղարշապատի համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը 2025 թվականի հունվարի 27-ին ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/4-1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում համայնքապետարանի կարիքների համար ապրանքի (սեղմված բնական գազի) ձեռքբերման պայմանագիր է կնքել օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի (փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող և համատեղ բնակվող) Արամայիս Միրզոյանի հոր՝ անհատ ձեռնարկատեր Աշոտ Արամայիսի Միրզոյանի հետ: Պայմանագրի արժեքը կազմել է 13 642 800 ՀՀ դրամ: Հանձնաժողովը գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ արձանագրել է, որ պահպանված են եղել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջները և ընթացակարգերը, հետևապես, նշված պայմանագրի կնքումը քննարկվել է միայն Հանձնաժողովին շահերի բախման մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու համատեքստում: Այսպես, Հանձնաժողովը արձանագրել է, որ Դիանա Գասպարյանը նշված պայմանագրի կնքման համատեքստում Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին համապատասխան հայտարարություն, թեև որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով, կրել է այդպիսի պարտավորություն, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի կարգավորումների խախտման: Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը որոշել է

Դիանա Գասպարյանի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցել՝ ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 25/4-1 ծածկագրով 2025 թվականի հունվարի 27-ին կնքված պայմանագրի շրջանակներում Հանձնաժողով շահերի բախման իրավիճակի վերաբերյալ գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով: Վարչական վարույթի արդյունքում Հանձնաժողովը որոշում է կայացրել Դիանա Գասպարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատկի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Վարչական տույժ կիրառելու մասին որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/v60no:

8. *«Արթիկ համայնքը 3 տարում 358 միլիոն դրամի գնում է կատարել ավագանու անդամի հոր ընկերությունից»*, *«Infocom.am», 16 ապրիլի, 2025 թ.:*

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Արթիկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի, 2022-2024 թվականներին համայնքի կարիքների համար աշխատանքների ձեռքբերման պայմանագրեր է կնքել նույն համայնքի ավագանու անդամ Տիգրան Բաղդասարյանի հորը՝ Վահագն Բաղդասարյանին պատկանող ընկերության հետ:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Անանիկ Ոսկանյանը, որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022-2024 թվականներին համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով «Ճանշին» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել է ութ գնման պայմանագիր: Գնումների քննարկվող գործընթացների վերաբերյալ առկա տվյալների ուսումնասիրմամբ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգային պահանջների խախտում Հանձնաժողովը չի արձանագրել: Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված ժամանակահատվածում համայնքի ավագանու անդամ Տիգրան Բաղդասարյանը զբաղեցրել է նույն ընկերության փոխտնօրենի պաշտոնը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Անանիկ Ոսկանյանը և Տիգրան Բաղդասարյանը Արթիկ համայնքի ավագանու ընտրություններին ավագանու անդամի թեկնածու են առաջադրվել և ընտրվել միևնույն կուսակցության ընտրացուցակով և շարունակում են հանդիսանալ այդ կուսակցության անդամ, վերջիններիս միջև առկա է անձնական և քաղաքական փոխկապակցվածություն: Միևնույն ժամանակ, Տիգրան Բաղդասարյանը «Ճանշին» փակ բաժնետիրական ընկերության հետ գտնվել է գործնական հարաբերությունների մեջ՝ ընկերության փոխտնօրենը լինելու հիմքով:

2022 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքով Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու իմպերատիվ պահանջ նախատեսված չի եղել: Միաժամանակ, շահերի բախման իրավիճակի առնչությամբ Հանձնաժողովին հայտարարություն չներկայացնելու հիմքով վարչական պատասխանատվությունը ներդրվել է 2023 թվականի հունվարի 2-ից, հետևապես, 2022 թվականին կնքված չորս գնման պայմանագրի համատեքստումՀանձնաժողովն իրավասու չի եղել քննելու շահերի բախման կարգավորումների խախտումը: Ինչ վերաբերում է 2023-2024 թվականներին կնքված պայմանագրերին՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պայմանագրի կնքման պահին գործող իրավակարգավորումների պայմաններում պարտավորություն է կրել Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն նախքան պայմանագրի կնքումը, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համապատասխան պահանջների խախտման: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, փոխկապակցված անձի հետ 2024 թվականի օգոստոսի 8-ին կնքված N ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-24/56/8 գնման պայմանագրի կնքման համատեքստում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 12-ին որոշել է Անանիկ Ոսկանյանի նկատմամբ հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

9. *«Մասիսի համայնքապետարանը 384 մլն դրամի պայմանագիր է կնքել ավագանու անդամի հոր ու եղբոր ընկերության հետ», «infocom.am», 21 ապրիլի, 2025 թ.:*

Համաձայն հրապարակման՝ 2022-2024 թվականներին Մասիսի համայնքապետարանը 26 պայմանագիր է կնքել ավագանու անդամներին պատկանող կամ նրանց փոխկապակցված ընկերությունների հետ՝ ընդհանուր 413 մլն դրամ արժեքով: Մասնավորապես, 2023 թվականին Սայաթ-Նովա և Հայանիստ բնակավայրերում ոռոգման համակարգերի կառուցման և նորոգման աշխատանքների իրականացման համար 384 մլն դրամի պայմանագիր է կնքվել «Էրգիր» բաց բաժնետիրական ընկերության հետ, որի բաժնետոմսերի 78%-ի սեփականատերը Մասիսում իշխող «Դավիթ Համբարձումյան դաշինք» խմբակցության անդամ Կարեն Արամայիսյանի հայրն է՝ Գագիկ Արամայիսյանը, իսկ մնացած բաժնետոմսերը պատկանում են ավագանու անդամի եղբորը՝ Վահե Արամայիսյանին, ով նաև

ընկերության տնօրենն է: 2022-2024 թվականներին Մասիսի համայնքապետարանը «Բլուր Շին» ընկերության հետ կնքել է 10 պայմանագիր՝ ընդհանուր շուրջ 1 մլն 400 հազար դրամ արժողությամբ: Ընկերության սեփականատերը և տնօրենը ավագանու անդամ Կարեն Արամայիսյանն է:

Հրապարակման մեջ նաև նշվել է, որ Մասիսի համայնքապետարանը գնումներ է կատարել Մասիսում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու նախկին անդամ Վահե Անտոնյանի մասնակցությամբ «Վէգաս» ընկերությունից:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Դավիթ Համբարձումյանը, որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2023 թվականի հունիսի 12-ին «Էրգիր» ԲԲ ընկերության հետ կնքել է ընդհանուր 384 000 000 ՀՀ դրամ արժեքով N ԱՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-23/7-6 պայմանագիրը: 2022-2024 թվականներին գնման գործընթացների արդյունքներով «Բլուր շին» ՍՊ ընկերության հետ Դավիթ Համբարձումյանը կնքել է ընդհանուր 710 000 ՀՀ դրամ արժեքով ութ գնման պայմանագիր: Գնումների քննարկվող գործընթացների վերաբերյալ առկա տվյալների ուսումնասիրմամբ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգային պահանջների խախտում Հանձնաժողովը չի արձանագրել: Նշված ժամանակահատվածում համայնքի ավագանու անդամ Կարեն Արամայիսյանը աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվել երկու ընկերությունների հետ և հանդիսացել է «Բլուր շին» ՍՊ ընկերության միակ մասնակիցը:

2022 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքով Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու իմպերատիվ պահանջ չի եղել: Համապատասխան իրավակարգավորումներն ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 2-ից, հետևապես, 2022 թվականին կնքված երկու գնման պայմանագրի կնքման դեպքերը Հանձնաժողովն իրավասու չէր քննելու շահերի բախման կարգավորումների խախտման համատեքստում: Ինչ վերաբերում է 2023-2024 թվականներին կնքված մնացած յոթ պայմանագրերին՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանը, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պայմանագրի կնքման պահին գործող իրավակարգավորումների պայմաններում պարտավոր էր Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն նախքան պայմանագրի կնքումը, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համապատասխան պահանջների խախտման: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, փոխկապակցված անձի հետ 2024 թվականի հուլիսի 24-ին

կնքված N ԱՄՄՀ-ՀՄԱԾՁԲ 24/8 և 2024 թվականի օգոստոսի 30-ին կնքված N ԱՄՄՀ-ՀՄԱԾՁԲ-24/96 գնման պայմանագրերի կնքման համատեքստում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով Հանձնաժողովը որոշել է Դավիթ Համբարձումյանի նկատմամբ նախաձեռնել վարչական վարույթ:

Ինչ վերաբերում է հրապարակման մյուս դրվագին՝ ապա, հաշվի առնելով տարբեր կուսակցությունների անդամներ լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Դավիթ Համբարձումյանի և Վահե Անտոնյանի միջև բացակայում է քաղաքական կապը: Միևնույն ժամանակ, բաց աղբյուրների ուսումնասիրությամբ վերջիններիս առերևույթ փոխկապակցվածության վերաբերյալ տեղեկություններ չեն գտնվել, որոնք կհավաստեին վերջիններիս միջև անձնական, այդ թվում՝ սերտ անձնական հարաբերությունների առկայությունը, ուստի սույն դեպքը վարույթի առարկա չի դարձվել:

10. «Միլիոնավոր դրամների գնումներ՝ Արթիկի փոխհամայնքապետի հետ կապվող ԱՁ-ից», «Fip.am», 22 ապրիլի, 2025 թ.:

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ «Արթիկի համայնքապետարանը 2022 թվականին 2.7 մլն դրամի գնման երկու պայմանագիր է կնքել նույն համայնքի ղեկավարի տեղակալ Արման Աջամօղլյանի հետ կապվող «Արմինե Հակոբյան» ԱՁ-ի (անհատ ձեռնարկատեր) հետ:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է շահերի բախման կարգավորումների համատեքստում:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Արթիկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի, 2022 թվականին համայնքի կարիքների համար հյուրասիրության ծառայություններ ձեռքբերելու նպատակով ԱՁ Արմինե Հակոբյանի հետ կնքել է երկու պայմանագիր:

2022 թվականին գործող իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումը սահմանվում էր որպես իրավիճակ, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Փոխկապակցված անձանց շրջանակը կազմում էին պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները: Այդ շրջանակը չէր ներառում համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը, հետևաբար, պայմանագրերի կնքման պահին համայնքի ղեկավարը

Հանձնաժողով գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորություն չի կրել: Ուստի, սույն դեպքը վարույթի առարկա չի դարձվել:

11. *[«Սխալմունքներ» Նոյեմբերյան համայնքում»](), «Hetq.am» լրատվական կայք, 13 հունիսի, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ 2022 թվականի օգոստոսի 5-ին Նոյեմբերյան համայնքի ավագանու արտահերթ նիստում, համայնքի ղեկավարի առաջարկով, ավագանին որոշել է տալ համաձայնություն՝ Նոյեմբերյան քաղաքի Շիրազի փողոց թիվ 39 հասցեի 496 քմ մակերեսով շինության 296 քմ մակերեսը վարձակալական հիմունքներով տրամադրել «Ջի-Գարաժ» ՍՊԸ-ին: Ընկերությունը հիմնադրվել է Գեղամ Ջիլավյանի կողմից, ով զբաղեցրել է համայնքի ղեկավարի տեղակալի, այնուհետև խորհրդականի պաշտոնները: 2025-ի հունվարի 15-ին համայնքի ավագանին որոշել է փոփոխություն կատարել ավելի վաղ ընդունած որոշման մեջ և տարածքը «Ջի Գարաժ» ՍՊ ընկերությանը վարձակալությամբ տրամադրելու ժամկետը դարձնել 25 տարի: Մեկ ամիս անց, հիմք ընդունելով ավագանու որոշումը, համայնքի ղեկավարը որոշել է Նոյեմբերյանի համայնքապետարանի և «Ջի Գարաժ» ՍՊԸ-ի միջև 2022թ. հոկտեմբերի 31-ին կնքված վարձակալության պայմանագրում ժամկետի փոփոխություն կատարել՝ այն դարձնելով 25 տարի:

Հրապարակումը նաև նշում է, որ 2025 թվականի մարտի 6-ին Նոյեմբերյանի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի, համայնքապետարանի համար պատուհաններ գնելու պայմանագիր է կնքել համայնքի ավագանու անդամ Քաջիկ Անանյանի հետ:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Հարկ է նշել, որ Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում:

Մինչդեռ՝ Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանն իր 2025 թվականի փետրվարի 17-ի N 294-Ա որոշումը, որի շրջանակներում համայնքային սեփականություն հանդիսացող շինության վարձակալության թիվ 3419 պայմանագրում վարձակալության ժամկետը փոփոխել է՝ 4 տարվա փոխարեն սահմանելով ավելի երկար 25 տարի ժամկետ, կայացրել է իր հետ փոխկապակցված անձանց՝ որդու Վահագն Աղաբաբյանի ներկայացվածությամբ՝ և օգնականի՝ Գեղամ Ջիլավյանի բաժնեմասնակցությամբ ընկերության՝ «Ջի-Գարաժ» ՍՊԸ-ի վերաբերյալ, ինչի կապակցությամբ համայնքի ղեկավարը պարտավոր էր գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով, ինչի չկատարումը հանգեցրել է ՀԾՄ օրենքի և ՎԻՎ օրենսգրքի համապատասխան կարգավորումների խախտման:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը արձանագրել է, որ Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանը 2025 թվականի փետրվարի 17-ի N 294-Ա որոշումը կայացրել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգավորումների շրջանակում, հետևապես նշված որոշման ընդունումը քննարկվել է Հանձնաժողովին շահերի բախման մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու համատեքստում: Վերոգրյալի շրջանակներում արձանագրվել է, որ Արսեն Աղաբաբյանը՝ որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պարտավոր էր շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով, ինչի չկատարումը հանգեցրել է ՀԾՄ օրենքի և ՎԻՎ օրենսգրքի համապատասխան կարգավորումների խախտման: Նշված հիմքով Հանձնաժողովը որոշել է Արսեն Աղաբաբյանի նկատմամբ նախաձեռնել վարչական վարույթ:
Հրապարակման հաջորդ դրվագով Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների և գնումների տեղեկագրի ուսումնասիրությամբ պարզել է, որ Նոյեմբերյանի համայնքապետարանն իր կարիքների համար պատուհանների ձեռքբերման նպատակով ՀՀՏՄՆՀՀ-ՄԱԱՊՁԲ-25/30 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր է կնքել՝ ընտրված մասնակից ճանաչված Քաջիկ Անանյան ԱՁ-ի հետ:
Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական և այլ բաց աղբյուրների ուսումնասիրությամբ Քաջիկ Անանյանի և համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի փոխկապակցվածությունը հավաստող տվյալներ ձեռք չի բերել, միաժամանակ Հանձնաժողովը արձանագրել է, որ միևնույն համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատելու հանգամանք բավարար չէ փոխկապակցությունը արձանագրելու համար մասնավորապես, հաշվի առնելով, որ վերջիններս տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ են:

12. *«Աշտարակ համայնքը վերջին 3 տարում շուրջ 735 մլն դրամի գնում է կատարել ավագանու անդամի ընկերությունից», «Infocom.am», 16 հունիսի, 2025 թ.:*

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի, 2022-2024 թվականներին համայնքի կարիքների համար աշխատանքների ձեռքբերման պայմանագրեր է կնքել նույն համայնքի ավագանու անդամ Արա Բաղդասարյանի կնոջը՝ Մերի Խաչատրյանին և հորեղբոր որդուն՝ Կարո Բաղդասարյանին պատկանող ընկերության հետ:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Թովմաս Շահվերդյանը, որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022-2024

թվականներին համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով «Ավանգարդ Շին» ՍՊ ընկերության («Շինպլյուս» ՍՊԸ և «ԷԿՈ ՍԻԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ հետ կոնսորցիումով) հետ կնքել է երեք գնման պայմանագիր: Գնումների քննարկվող գործընթացների վերաբերյալ առկա տվյալների ուսումնասիրմամբ ընթացակարգային պահանջների խախտում Հանձնաժողովը չի արձանագրել:

Պայմանագրերի կնքման ժամանակահատվածում «Ավանգարդ Շին» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավար է հանդիսացել Աշտարակ համայնքի ավագանու անդամ Արա Բաղդասարյանը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Թովմաս Շահվերդյանը և Արա Բաղդասարյանը Աշտարակ համայնքի ավագանու ընտրություններին ավագանու անդամի թեկնածու են առաջադրվել և ընտրվել միևնույն կուսակցության ընտրացուցակով և շարունակում են հանդիսանալ այդ նույն կուսակցության անդամներ, Հանձնաժողովն արձանագրել է, որ վերջիններիս միջև առկա են քաղաքական հարաբերություններ: Միևնույն ժամանակ, արձանագրվել է, որ Արա Բաղդասարյանն 2022 թվականի հունիսի 6-ից «Ավանգարդ Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում զբաղեցնում է գործադիր մարմնի ղեկավարի՝ տնօրենի պաշտոնը: Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետները՝ 2023-2024 թվականներին կնքված պայմանագրերի համատեքստում արձանագրել է, որ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պարտավորություն է կրել Հանձնաժողով ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ նախքան պայմանագրի կնքումը, ինչի չկատարումը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համապատասխան պահանջների խախտման: Սույն հիմքով, իր հետ օրենքի իմաստով փոխկապակցված անձի՝ ավագանու անդամ Արա Բաղդասարյանի հետ 2024 թվականի սեպտեմբերի 26-ին N ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-24/5/1 ծածկագրով գնման պայմանագրի կնքման համատեքստում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով որոշվել է Թովմաս Շահվերդյանի նկատմամբ նախաձեռնել վարչական վարույթ:

13. *«Վանաձորի համայնքապետարանի աշխատակցին փոխկապակցված ընկերությունը 188.5 մլն դրամի պայմանագրեր է կնքել համայնքի հետ», «Infocom.am», 23 հունիսի, 2025 թ.:*

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ «Վանաձորի համայնքապետարանը 2021-2025 թվականներին 188.5 մլն դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքապետարանի աշխատակից Միհրան Պառավյանի

հոր՝ «Պագամի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, իսկ 2024 թվականին նույն համայնքի ավագանու անդամ Գևորգ Հարությունյանի «ՌԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է մոտ 4.0 մլն դրամի գնման պայմանագրեր:
Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արկադի Փելեշյանի,2023-2025 թվականներին սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների ձեռքբերման նպատակով «Պագամի» ՍՊ ընկերության հետ կնքել է 8 պայմանագիր՝ ընդհանուր 105 283 147 ՀՀ դրամ արժեքով:
Նշված ժամանակահատվածում «Պագամի» ՍՊ ընկերության միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը հանդիսացել է Գրիշա Պառավյանը:ը: Վերջինիս որդին՝ Միհրան Պառավյանը, զբաղեցնում է Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և շինարարության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնը: Չնայած վերոգրյալին՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավարի և Մ. Պառավյանի միջև առկա չէ օրենքի իմաստով փոխկապակցվածություն, ուստի պայմանագրերի կնքումը Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի առարկա չի դարձվել: Միաժամանակ, համայնքապետարանը 2024 թվականին նորոգման և կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՌԻԳ» ՍՊ ընկերության հետ կնքել է 4 գնման պայմանագիր՝ ընդհանուր 3 092 417 ՀՀ դրամ արժեքով: Ընկերության միակ մասնակիցը և տնօրենը Վանաձոր համայնքի ավագանու անդամ Գևորգ Հարությունյանն է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա. Փելեշյանը և Գ. Հարությունյանը չեն հանդիսանում միևնույն քաղաքական ուժի՝ կուսակցության անդամներ և վերջիններիս միջև առկա չեն քաղաքական հարաբերություններ, Հանձնաժողովը սույն դրվագով վարչական վարույթի հարուցման հիմքեր չի արձանագրել:

14. *«Իջևան համայնքը 275 մլն դրամի գնումներ է կատարել ավագանու անդամներին փոխկապակցված ընկերություններից», «Infocom.am», 26 հունիսի, 2025 թ.:*

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ «Իջևանի համայնքապետարանը 2022-2025 թվականներին 193 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու անդամ Խաչատուր Աթաբեկյանի հոր՝ «Արտարս» ՍՊ ընկերության հետ: Համայնքապետարանը նույն ժամանակահատվածում ևս 79.8 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու մեկ այլ անդամի՝ Խաչատուր Համզյանի հետ փոխկապակցված «Խաչմիշշին» ՍՊ ընկերության ու «Փառանձեմ Նազինյան» անհատ ձեռնարկատիրոջ

հետ: Բացի դրանից, Համայնքապետարանը 2024 թվականին համայնքի ավագանու անդամ Նաիրի Ջանվելյանի հետ, որպես անհատ ձեռնարկատիրոջ, կնքել է 980 000 ՀՀ դրամի աշխատանքների ձեռքբերման պայմանագիր:

Հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվությունը ուսումնասիրության փուլում է:

15. *«Վարդան Ղուկասյանի փեսան և ընկերն ընտրվեցին Գյումրու առաջին և երկրորդ փոխքաղաքապետ. ՔՊ-ն ձեռնպահ է քվեարկել»*, *«Armtimes.com» լրատվական կայք, մայիսի 2, 2025 թ.:*

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրություն է նախաձեռնվել նաև «Armtimes.com» լրատվական կայքի հրապարակման հիման վրա: Համաձայն հրապարակման՝ 2025 թվականի մայիսի 2-ին տեղի ունեցած՝ Գյումրի համայնքի ավագանու նիստում Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալներ են ընտրվել համայնքի ղեկավարի փեսան՝ Ավետիս Առաքելյանը և ընկերը՝ Գագիկ Մանուկյանը:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրության է առել համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների, և համայնքի ղեկավարի տեղակալի՝ այլ սահմանափակումների պահպանման համատեքստում: Ուսումնասիրությունն ընթացքի մեջ է:

Շահերի բախման կարգավորումների խախտումներին առնչվող, նախորդ կիսամյակի ուսումնասիրությունների հիման վրա եզրափակված վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից եզրափակվել են շահերի բախման կարգավորումներին առնչվող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված թվով 2 վարույթներ: Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված՝ վերոնշյալ վարույթներով զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու արարքով, ինչից հետևում է, որ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա իր մասնավոր շահի ազդեցության չեզոքացում ապահովելու անհրաժեշտությունից ելնելով պարտավոր է յուրաքանչյուր դեպքում ձեռնպահ մնալ գործողություն

կատարելուց, և պարտավոր է օրենքով սահմանված ժամկետում այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով, որն էլ, իր հերթին, առաջարկում է ձեռնարկել առաջացած իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր: Եթե Հանձնաժողովը եզրահանգում է, որ նշված իրավիճակում առկա չէ շահերի բախում, ապա այդ դեպքում Հանձնաժողովն առաջարկում է շարունակել կամ վերսկսել պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումը: Իսկ մինչ Հանձնաժողովի կողմից իրավիճակի լուծմանն ուղղված քայլերի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց: Նշվածից հետևում է, որ վերադաս կամ անմիջական վերադաս չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց պարագայում Օրենսդիրը շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրահանգում իրականացնելու բացառիկ լիազորությունը վերապահել է Հանձնաժողովին, ինչը նշանակում է, որ պաշտոն զբաղեցնող անձը չպետք է ինքնուրույն գնահատականներ տա շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության վերաբերյալ, այլ պետք է օրենքով սահմանված ընթացակարգով ապահովի Հանձնաժողովին համապատասխան գրավոր հայտարարության ներկայացումը, որից հետո առաջնորդվի լիազոր մարմնի կողմից ներկայացված առաջարկով: Մինչդեռ վերոնշյալ բոլոր դեպքերում պաշտոնատար անձանց կողմից չէր ներկայացվել գրավոր հայտարարություն Հանձնաժողովին՝ հնարավոր շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ: Վերոնշյալ 2 վարույթների իրականացման առիթ են հանդիսացել լրատվամիջոցների հրապարակումները և 2024 թվականի անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները:

Այսպես՝

1. Հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում հիմք ընդունելով «hetq.am» լրատվական կայքի՝ «Ախուրյանի ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Մարտիկ Մաթոսյանը 99 պայմանագիր է կնքել համայնքի և այլ պետական կառույցների հետ» վերտառությամբ հրապարակումը իրականացրել է հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վերհանված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Զավեն Մանուկյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ Զավեն Մանուկյանը 2024 թվականի մայիսի 17-ին Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար կնքել է N ՇՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-24/21

ապրանքների մատակարարման պայմանագիրը «ՍՄԱՐԹՎԵՅՎ» ՍՊ ընկերության հետ, որի 100 տոկոս բաժնեմասնակիցը, իրական շահառուն և գործադիր մարմնի ղեկավարը հանդիսացել է վերջինիս հետ փոխկապակցված անձ՝ նույն համայնքի ավագանու նույն խմբակցության անդամ Մարտիկ Մաթոսյանը: Նշված պայմանագրի կնքմամբ Զավեն Մանուկյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով:

Հանձնաժողովը, 2025 թվականի ապրիլի 8-ին քննելով Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Զավեն Մանուկյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2025 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/82/2025 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, որոշել է Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Զավեն Մանուկյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Հանձնաժողովը 2024 թվականին նախաձեռնել էր տարածքային և տեղական մակարդակում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում: Մշտադիտարկման շրջանակներում իրականացված ուսումնասիրությամբ արձանագրվել էր, որ 2024 թվականի հուլիսի 31-ին Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների ձեռքբերման նպատակով համայնի ղեկավար Մանվել Փարամազյանը կնքել է ՔՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/06-08 ծածկագրով գնման պայմանագիր «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊ ընկերության հետ, որի իրական շահառուն՝ 40 % անուղղակի մասնակցությամբ հանդիսանում է համայնքի ղեկավարի կինը՝ Լ. Դավթյանը: Գնման գործընթացին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրությամբ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների և ընթացակարգերի առերևույթ խախտումներ չեն վերհանվել, հետևապես, Հանձնաժողովը խնդրո առարկա պայմանագրի կնքումը դիտարկել է Հանձնաժողովին շահերի բախման վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու պահանջի համատեքստում: Հանձնաժողովի կողմից արձանագրվել էր, որ վերոնշյալ պայմանագիրը կնքելուց առաջ Մանվել Փարամազյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացվել շահերի բախմանը վերաբերող

հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով: Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 4-ի թիվ ՎԻՎ/83/2025 որոշմամբ Քաջարան համայնքի ղեկավարի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Անհամատեղելիության պահանջների վերաբերյալ

1. *«Նոր մեքենա, նոր տուն՝ Ծաղկաձորում, արժեթղթեր ու փողեր, փողեր… փողեր . «Քաղաքական վենդետա լինելու է», «համբալի լավը» ասող Արսեն Թորոսյանի վերջին հայտարարագիրը», «168.am» լրատվական կայք, 16 մայիսի, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյանը 2024 թվականի տարեկան հայտարարագրում պահպանել է 2023 թվականին հայտարարագրած «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ից և UniCredit Bank Austria AG-ից գնած արժեթղթերը: Միաժամանակ, 2024 թվականի շահերի հայտարարագրում «Ներկայացվածություն առևտրային կազմակերպությունում» բաժնում վերջինս նշել է «ՄԻԲՍ» ՍՊԸ-ում իր տնօրեն լինելու մասին: Ըստ հրապարակման՝ Արսեն Թորոսյանի կնոջը պատկանող «ՄԻԲՍ» բժշկական կենտրոնը վերջինիս կողմից առողջապահության նախարար դառնալուց հետո է սկսել մասնակցել պետական գնումներին և կնքել բժշկական ծառայությունների մատուցման պայմանագրեր, այդ թվում՝ առողջապահության նախարարության հետ:

Հանձնաժողովը սույն հրապարակումը քննարկել է 3 դրվագով՝ արժեթղթերի առկայության, առևտրային կազմակերպությունում ներկայացվածության և շահերի բախման:

Հանձնաժողովն ուսումնասիրել է «UniCredit Bank Austria AG»-ի և «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալը և արձանագրել, որ Արսեն Թորոսյանին պատկանող արժեթղթերի քանակը չի գերազանցում Օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 10-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ֆոնդային բորսայում առևտրին թույլատրված արժեթղթերի թույլատրելի՝ նույն ընկերության կանոնադրական կապիտալում առավելագույնը մեկ տոկոս մասնակցության չափը:

Անդրադառնալով հրապարակման 2-րդ դրվագին՝ Արսեն Թորոսյանի «ՄԻԲՍ» ՍՊ ընկերությունում ունեցած ներկայացվածության՝ գործադիր մարմնի ղեկավար հանդիսանալուն, Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների

տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Արսեն Թորոսյանը «ՄԻԲՍ» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը զբաղեցրել է 14.04.2011-20.01.2016 թթ. և 10.01.2017-29.05.2018 թթ., իսկ 29.05.2018թ. առ այսօր ընկերության գործադիր մարմնի ղեկավարը հանդիսանում է վերջինիս կինը՝ Վարդանուշ Թևանյանը:

Հրապարակման վերջին դրվագի առնչությամբ Հանձնաժողովն արդեն իսկ 2020 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 04/2020 եզրակացությամբ ուսումնասիրել է «ՄԻԲՍ» ընկերության և Առողջապահության նախարարության միջև կնքված բժշկական ծառայությունների մատուցման պայմանագրերը, միաժամանակ, կայացված եզրակացությունը հրապարակված է կայքում և հասանելի է հետևյալ հղումով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/05/355.pdf:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների խախտում չի արձանագրվել:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը:

Սույն գործառույթի ապահովման շրջանակներում Հանձնաժողովը 2024 թվականին նախաձեռնել է տարածքային և տեղական մակարդակում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում, որի արդյունքներն ամփոփվել են արդեն 2025 թվականի առաջին կիսամյակում:

Մշտադիտարկումն իրականացվել է Հանձնաժողովի կողմից հաստատված պլանի համաձայն, որը հրապարակվել է 2024 թվականի հունիսի 5-ին՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2024/06/05/1/: Ուսումնասիրության սուբյեկտ են սահմանվել ՀՀ խոշորացված համայնքների ղեկավարները, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզպետները և նրանց տեղակալները՝ ընդհանուր թվով 105 պաշտոնատար անձ:

Հանձնաժողովը մշտադիտարկման արդյունքում շահերի բախման իրավական կարգավորումների խախտման՝ մասնավորապես՝ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Հանձնաժողովին գրավոր հայտարարություն չներկայացնելու հիմքով համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ 2025 թվականին հարուցել է

թվով 3 վարչական վարույթ՝ ՎԻՎ/81/2025, ՎԻՎ/15/2025 և ՎԻՎ/83/2025, որոնց արդյունքում վերջիներիս նկատմամբ կիրառվել է վարչական տույժ: Նշված 3 դեպքերում Հանձնաժողովն արձանագրել է, որ համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձինք, որպես պատվիրատուի ղեկավար, համայնքային կարիքների համար պատվիրված գնման գործընթացների արդյունքում պայմանագրեր են կնքել իրենց հետ փոխկապակցված անձանց կամ նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ, ինչի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չեն ներկայացրել շահերի բախմանը վերաբերող հայտարարություն:

Մշտադիտարկման արդյունքում անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում է արձանագրվել երեք անձի մոտ, մի դեպքում՝ գործող առևտրային կազմակերպության բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման չհանձնելու, մյուս դեպքում՝ հավատարմագրային կառավարման պահանջների խախտմամբ հանձնելու, և վերջին դեպքում՝ պաշտոնավարման ընթացքում առևտրային կազմակերպության ներկայացուցչական գործառույթներին ներգրավվածության հիմքով:

2024 թվականի անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման արդյունքները Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակվել են 2025 թվականի մայիսի 2-ին: Մշտադիտարկման ողջ գործընթացի և արձանագրված խախտումների, ինչպես նաև ընդհանուր վիճակագրության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/Մշտադիտարկման-ամփոփում-2024-.pdf:

Անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման 2025 թվականի պլանը հաստատվել է Հանձնաժողովի՝ 2025 թվականի մարտի 20-ի N 02-Լ որոշմամբ: Հաստատված պլանը հրապարակվել է 2025 թվականի մարտի 20-ին՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/03/00-20.pdf:

Հիմք ընդունելով ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի գնահատման հինգերորդ փուլի շրջանակներում սահմանված սուբյեկտային կազմը, ուսումնասիրության սուբյեկտ են սահմանվել ՀՀ վարչապետը, փոխվարչապետերը, նախարարները և վերջիններիս տեղակալները, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականները՝ ընդհանուր թվով 113 պաշտոնատար անձ:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվում են նշված անձանց՝ առևտրային արժեթղթերի տիրապետման, այլ աղբյուրից վարձատրության ստացման, առևտրային կազմակերպություններում մասնակցություն կամ ներկայացվածություն ունենալու կամ այլ եղանակով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, իրենց կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ տվյալները: Զուգահեռաբար՝ ուսումնասիրվել է պաշտոնատար անձանց հետ

փոխկապակցված առևտրային կազմակերպությունների՝ պետական գնումների գործընթացներին մասնակցությունը:

2025 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովի կողմից մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար 30 անձանց (պաշտոնատար անձ և ընտանիքի անդամներ) նկատմամբ արդեն իսկ իրականացվել են ուսումնասիրություններ: Իրականացված գործընթացների արդյունքում՝ 20 անձի մոտ որևէ անհամապատասխանություն չի արձանագրվել, 5 անձի դեպքում առանձին հարցումներ են ուղարկվել առևտրային կազմակերպություններում մասնակցության և այլ վճարովի աշխատանք կատարելու վերաբերյալ: Բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ առևտրային կազմակերպությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է, Հանձնաժողովը դրանց գործունեության դադարեցման հիմքերի և ժամկետների վերաբերյալ տեղեկություններ է հայցել իրավասու մարմիններից: Առանձին դեպքերում տեղեկատվություն է հայցվել նաև ԱՁ-ների և առևտրային կազմակերպությունների՝ փաստացի իրացման շրջանառության առկայության վերաբերյալ: Նշված համատեքստում հարցումներ են կատարվել ՊԵԿ՝ 2 անհատ ձեռնարկատիրոջ, 1 առևտրային կազմակերպության և 1 այլ վճարովի աշխատանք կատարելու վերաբերյալ: Ուսումնասիրության շրջանակներում էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ 1 հարցում է կատարվել նաև մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձի: Իրականացված 5 հարցումներից 3-ը ամփոփվել են, իսկ 2 դեպքում իրականացվում են լրացուցիչ ուսումնասիրություններ: Եվս 5 դեպքում արձանագրվել են հայտարարագրմանն առնչվող անհամապատասխանություններ, որոնց առնչությամբ ընթանում են ստուգումներ:

Մշտադիտարկման գործընթացի ամփոփումը նախատեսվում է ավարտին հասնել մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը:

Վարքագծի կանոնների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վարքագծի կանոնների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա թվով 9 ուսումնասիրություն: Չորս դեպքում վարքագծի կանոնի առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովը հարուցել է համապատասխան վարույթ:

1. *«Պապոյանն իր ընդդիմախոսներին համեմատել է շների հետ, ապա գրառումը հեռացրել», «Factor.am» լրատվական կայք, փետրվարի 28, 2025 և «ՓՄՁ*

ասոցիացիայի կառավարման խորհրդի բաց նամակը Նիկոլ Փաշինյանին», *«Iravaban.net» լրատվական կայք, 3 մարտի, 2025 թ.:*

Համաձայն հրապարակումների՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում կատարել է առերևույթ վիրավորական արտահայտություններ («ոմանք ոռնում են», «ծակ պրոֆեսոր «տնտեսագետներ», «լրագրողներ» ու այլ ինքնահռչակներ ամբողջ տարի ոռնում էին», «սև հաշվապահություն սպասարկող (...) դալալ» պարունակող գրառումներ:

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Հանձնաժողովի Կանոնագրքի համատեքստում, որի 48-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ: Նույն կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը:

Ուսումնասիրությունը կատարվել է ոչ միայն հրապարակումների, այլ նաև քաղաքացու դիմումի հիման վրա, որով ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից կատարված գրառումներից մեկի առնչությամբ վարույթ հարուցելու պահանջ:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Գ. Պապոյանի վարքագիծը պարունակում է նշված կանոնի առերևույթ խախտում, քանի որ սոցիալական մեդիայում վիրավորական արտահայտություններ պարունակող հրապարակման կատարումը առերևույթ կերպով կարող է հանգեցնել հանրային իշխանության հեղինակազրկման կամ հեղինակության արատավորման: Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է նշված դեպքի առթիվ հարուցել վարույթ:

Վարույթի արդյունքում կայացվել է վարքագծի կանոնի խախտման բացակայության վերաբերյալ եզրակացություն՝ հետևյալ հանգամանքներով պայմանավորված.

1) խնդրո առարկա գրառումները կատարվել են ի պատասխան ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն ուղղված քննադատության և նաև նպատակ են ունեցել հասցեագրելու այդ քննադատությունը, այսինքն՝ չեն ունեցել բացառապես վիրավորելու նպատակ,

2) գրառումները չեն պարունակել խիստ անպատշաճ, գռեհիկ արտահայտություններ, ինչպես նաև այնպիսի արտահայտություններ, որոնք կարող են համարվել խիստ անձնական բնույթի վիրավորանք,

3) կատարված արտահայտություններն առավելապես արհամարհական և ծաղրական բնույթ են կրել, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Գ.Պապոյանը զբաղեցնում է քաղաքական պաշտոն և քաղաքական գործիչ է, նշված արտահայտությունների գործածումը կարող է համարվել որոշակիորեն ցնցող կամ սադրիչ, սակայն իրավաչափ քննադատության սահմանները չանցնող,

4) նշված գրառումներից երկուսը չեն ունեցել մեծ հանրային արձագանք, որը Հանձնաժողովի կողմից գնահատվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում դրանց արձագանքների, զանգվածային լրատվության միջոցների վերաբերելի հրապարակումների ուսումնասիրությամբ: Մեկ այլ գրառում ունեցել է բուռն հանրային արձագանք, որին ի պատասխան՝ Գ.Պապոյանը նախ փորձել է պարզաբանել գրառման նշանակությունը, այնուհետև խմբագրել է գրառումը և ապա՝ հեռացրել այն, ինչը Հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես Գ.Պապոյանի կողմից իր վարքագծի շտկում, որը ողջամտորեն կարող է նվազեցնել այդ վարքագծի հետևանքով հանրային իշխանության հեղինակությանը վնաս հասցնելու հավանականությունը:

Հանձնաժողովի եզրակացությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/06/00-12.pdf:

2. *«Արարատ Միրզոյանը հրաժարվում է պատասխանել հայ լրագրողների հարցերին և վիրավորում է», «Armlur.am» լրատվական կայք, 13 մարտի, 2025 թ.:*

Համաձայն հրապարակման՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Կառավարության նիստից հետո վիրավորել է լրագրողներին: Մասնավորապես, լրագրողը Կառավարության նիստից հետո Ա. Միրզոյանին փորձել է ճեպազրույցի հրավիրել, ապա, հավանաբար, բացասական պատասխան ստանալով, նշել է՝ «Ինչի՞: Մենակ թուրք գործընկերների համար ե՞ք գնում, պարոն Միրզոյան»: Ա. Միրզոյանը հետ է շրջվել դեպի լրագրողը, մոտեցել նրան և ասել. «Նախ ես համարում եմ էս Ձեր ասածը վերին աստիճանի անդաստիարակ, անշնորհք և ոչ արհեստավարժ (լրագրողն ընդհատում է՝ երևի շնորհքովը Ձեզն է, Ձեր արածն ա, որ Դուք ձեռքը ձեր գրպանը դրած պատասխանում եք): Սուս մնացեք, ես պատասխանում եմ: Եվ երկրորդը, սա լրագրողների մասնագիտական գործունեություն չի, սա քաղաքական ակցիա է: Ամոթ ձեզ: (սկսում է հեռանալ)»: Մյուս լրագրողի հետ ևս տեղի է ունեցել կարճ փոխանակություն, փոխադարձ բառարկություններ են հնչել:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի համատեքստում, որի 51-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով

չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Հրապարակումներով նկարագրված արարքի գնահատման նպատակով Հանձնաժողովն իմաստաբանական վերլուծության է ենթարկել Արարատ Միրզոյանի գործածած բառերը և արտահայտությունները՝ եզրահանգելով, որ որոշ արտահայտություններ («անդաստիարակ, անշնորհք, ամոթ Ձեզ») ունեն մեղմ հանդիմանական կամ նախատական երանգ և ուղղված են եղել լրագրողների գործողություններին գնահատական տալուն և ոչ թե նրանց անհատապես վիրավորելուն: Հանձնաժողովը գտել է, որ Արարատ Միրզոյանի արձագանքն իր բովանդակությամբ, տոնայնությամբ և բնույթով համահունչ կամ համապատասխան է եղել լրագրողների վարքագծին՝ հաշվի առնելով հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների և դրանց կապակցությամբ պետական քաղաքականության հետ կապված սոցիալական լարված իրավիճակը, և այն, որ լրագրողի հարցը տրվել է հարցազրույցից դուրս, ունեցել է սադրիչ բնույթ, և Արարատ Միրզոյանի կողմից ընկալվել է որպես քաղաքական բնույթի հայտարարություն:

Հանձնաժողովը գտել է, որ անձնական բնույթի վիրավորանք չպարունակող, մեղմ հանդիմանական ու նախատական բնույթի քննադատական խոսքը, որը նաև իր բնույթով համարժեք է լրագրողի վարքագծին, չի կարող համարվել ոչ հարգալից վերաբերմունք:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայություն և որոշել է նշված դեպքի առթիվ չհարուցել վարույթ:

3. *«Գյումրիում սովետական բարբեր թարոգող տավարապետը զբաղված է թարոգչությամբ ընդդեմ ՀՀ ինքնիշխանության. Չախոյան», «Հայկական ժամանակ» լրատվական կայք, 19 մարտի, 2025 թ., «Ինքն իրեն Վարդանիկ ու տավարապետ է հռչակել, բայց զարմանում ու նեղվում է, որ Վարդանիկ-ով են դիմում. Չախոյան», «Հայկական ժամանակ» լրատվական կայք, 24 մարտի, 2025 թ., «Վարչապետին հեռացնելու մասին բարբաջող Մերժ Սարգսյանը էլի ցողունային բջիջնե՞ր է ընդունել. Չախոյան», «Հայկական ժամանակ» լրատվական կայք, 25 ապրիլի, 2025, «Գործ ունենք 6-րդ պալատից վեղարով փախած քաղաքական հոգեխանգարվածի հետ, օրինակ է՝ ինչպիսին չպիտի լինի հոգևորականը. Չախոյան», «Հայկական ժամանակ» լրատվական կայք, 10 հունիսի, 2024 թ.:*

Համաձայն հրապարակումների՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում կատարել է ենթադրյալ վիրավորական արտահայտություններ («տավարապետ», «բարբաջող»,

«ցողունային բջիջնե՞ր է ընդունել», «6-րդ պալատից վեղարով փախած քաղաքական հոգեխանգարված») պարունակող գրառումներ։

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի համատեքստում, որի 48-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ։ Նույն կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը։

Հանձնաժողովն արձանագրել է, որ «տավարապետ» բառի գործածմամբ Տ.Չախոյանը նկատի ունի Վարդան Ղուկասյանի կողմից գործածած «товаровед» բառը, որը նման սխալ գործածմամբ հանդիպել է նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներում։ Հաշվի առնելով այս հանգամանքը, նկատի ունենալով, որ հրապարակումները կատարվել են Գյումրի համայնքի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում և նպատակ են ունեցել քննադատելու համայնքի ղեկավարի թեկնածուին ու նրա գաղափարական մոտեցումները, իսկ նախընտրական քարոզարշավի ժամանակաշրջանում թեկնածուներին ուղղված քննադատական խոսքն ինքնին օգտվում է առավել լայն պաշտպանության շրջանակից՝ Հանձնաժողովը գտել է, որ Տ.Չախոյանի նշված գրառումները չեն հատել իրավաչափության սահմանը։

«Բարբաջող» և «ցողունային բջիջներ է ընդունել» արտահայտությունները պարունակող գրառման առնչությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ չնայած գրառման կոպիտ տոնայնությանը, այն նպատակ է ունեցել քննադատելու մի քանի քաղաքական և հասարակական-քաղաքական գործիչների հնչեցրած խոսքը։ Ըստ այդմ, գրառումը առավելապես ոչ թե անձնական վիրավորանքներ է պարունակել, այլ քննադատական խոսք, որը հիմնվել է որոշակի փաստական հենքի վրա, ինչից ելնելով՝ Հանձնաժողովը գտել է, որ այս գրառումը ևս կատարվել է իրավաչափության սահմաններում։

Ըստ այդմ, Հանձնաժողովը նշված 3 գրառումների կապակցությամբ արձանագրել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայություն և որոշել դրանց առթիվ չհարուցել վարույթ։

4-րդ գրառման առնչությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «6-րդ պալատից վեղարով փախած քաղաքական հոգեխանգարված» արտահայտության կիրառմամբ Տ.Չախոյանը հասարակական-քաղաքական գործչին կոչել է հոգեկան

առողջության խնդիր ունեցող։ Հանձնաժողովը գտել է, որ նշված արտահայտության գործածումը խնդրահարույց է՝ նկատի ունենալով, որ նախ, գրառումը հաստատող փաստական հանգամանքների բացակայության դեպքում ակներև է, որ այդ արտահայտությունը գործածվում է առերևույթ վիրավորական իմաստով, բացի այդ, հոգեկան առողջության խնդիր ունենալը, անկախ դրա հաստատված լինել կամ չլինելու հանգամանքից, որպես վիրավորական արտահայտություն գործածելը կամ դրանով անձին պիտակավորելը ինքնին վկայում է այն մասին, որ Տ.Չախոյանի գրառումը խտրական խոսք է պարունակում, քանի որ դրանից ենթադրվում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունենալն ամոթալի կամ վիրավորական է, ինչն արատավորող, խարանավորող բնույթ ունի։ Ընդ որում, Տ.Չախոյանի կողմից գործածվում են նաև ոչ զգայուն տերմիններ՝ «հոգեխանգարված», «6-րդ պալատից փախած», որոնք ևս վկայում են ինչպես վիրավորելու նպատակի, այնպես էլ խտրական մոտեցման մասին։

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված գրառման կատարումը պարունակում է վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ։

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը որոշել է նշված դեպքի առթիվ չհարուցել վարույթ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գրառմամբ շոշափվել են կոնկրետ անձի իրավունքները, ով Հանձնաժողովին դիմում չի ներկայացրել, իսկ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մնացած նախապայմանները բացակայել են։ Մասնավորապես, Հանձնաժողովն արձանագրել է, որ առերևույթ խախտումը չի ներկայացնում հանրային մեծ հետաքրքրություն, ինչպես նաև չունի համակարգային բնույթ։ Հանձնաժողովը համարել է, որ խախտումը կարող է կրել համակարգային բնույթ, եթե այն կատարվել է պարբերաբար (առնվազն 3 և ավելի անգամ) նույն պաշտոնատար անձի կողմից կամ վերջին մեկ տարվա ընթացքում տարբեր պաշտոնատար անձանց կողմից։ Նկատի ունենալով, որ մինչ այս ուսումնասիրությունը Հանձնաժողովի կողմից արձանագրվել էր Տ.Չախոյանի կողմից նշված վարքագծի կանոնի առերևույթ խախտման միայն մեկ դեպք՝ խախտման համակարգային բնույթը ևս բացակայել է։

4. *«Մարդիկ փափախով քուրդ չեն. սովոր եք՝ քաղաքը բաժան-բաժան արվի, ամենքն իրա քյարն ունենա. Ավինյան (տեսանյութ)», «a1plus.am» լրատվական կայք, մարտի 18, 2025 թ. և «Կզգուշացնեմ, որ զգույշ խոսի. Հասանովը՝ Ավինյանի «փափախով քուրդ», «Sputnik Արմենիա» լրատվական կայք, 19 մարտի, 2025 թ.:*

Հրապարակումների համաձայն՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը Երևանի ավագանու նիստին ելույթի ընթացքում խտրական արտահայտություն է գործածել՝ նշելով. «Էս մեր գործընկերները ինչքան էլ փորձեն իրենց տարանջատեն

բոլոր նախկին իշխանություններից, դա ուղղակի անհնար ա. մարդիկ էդքան, կներեք, բայց փափախով քուրդ չեն։»։

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի համատեքստում, որի 37-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը։

Հանձնաժողովն արձանագրել է, որ Կանոնագրքի 37-րդ կետով սահմանված՝ այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը ենթադրում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ատելության խոսքի գործածումից զերծ մնալու պահանջը, որը պետք է մեկնաբանվի լայն իմաստով՝ ներառելով ոչ միայն ատելության խոսքի քրեաիրավական դրսևորումները, այլ նաև որոշակի հատկանիշի հիմքով անձի կամ անձանց խմբի նսեմացումը, բացասական կարծրատիպերի ձևավորումը, վիրավորանքները, սպառնալիքները։

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը գտել է, որ տվյալ պարագայում Տ.Ավինյանի վարքագիծը չի հանգեցրել ատելության խոսքի գործածման՝ հետևյալ հիմնավորմամբ՝

«Փափախով քուրդ»-ը խոսակցական լեզվում հաճախ հանդիպող արտահայտություն է, որը թեև չի հանդիպում հայերենի բացատրական բառարաններում, բայց Տ. Ավինյանի խոսքի ընդհանուր համատեքստում դրա բացատրությունը դիտարկելով՝ կարելի է եզրակացնել, որ Տ. Ավինյանը նշված արտահայտությունը կիրառել է «միամիտ, պարզամիտ» իմաստներով՝ նկատի ունենալով, որ մարդիկ միամիտ չեն և կարողանում են տեսնել իրականությունը։

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ թեև «փափախով քուրդ» արտահայտությունը Տ. Ավինյանի կողմից չի գործածվել դրական իմաստով, այն նաև չի կրել վիրավորական իմաստ, ինչից ելնելով՝ չի կարող համարվել, որ Տ. Ավինյանն իր խոսքով վիրավորել, նսեմացրել է քրդերին՝ ազգության հիմքով կամ որ նրա խոսքն ուղղված է եղել քրդերի մասին բացասական կարծրատիպեր ձևավորելուն կամ ամրապնդելուն։

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրել է վարքագծի կանոնի առերևույթ խախտման բացակայություն և որոշել է նշված դեպքի առթիվ չհարուցել վարույթ։

5. *«ՏԵՍԱՆՅՈՒԹ. Ձեզ ոտիս տակ կտամ, պատերով կտամ, ձեր քաղաքական դիակների մնացորդները կհանեմ. Փաշինյանը հունից դուրս եկավ», «Armlur.am» լրատվական կայքի, մարտի 26, 2025 և «Որևէ դուրսպրծուկ չի կարող բռնանա. շատ արագ կհայտնվի ասֆալտին. Փաշինյան», «168.am» լրատվական կայք, 26 մարտի, 2025 թ.։*

Հրապարակումների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովի ութերորդ գումարման իններորդ նստաշրջանի՝ սույն թվականի մարտի 26-ի նիստի ընթացքում, պատասխանելով պատգամավորների հարցերին, կիրառել է վիրավորական և սպառնալիք պարունակող արտահայտություններ, ինչպես օրինակ՝ «վեր ընկեք տեղներդ, ձեններդ կտրեք», «ձեզ էդ պատերով կտամ և ըտեղի ձեր քաղաքական դիակի մնացորդները դուրս կհանեմ», «ձեզ ոտի տակ կտամ», «դուրսպրծուկ», «ինքը շատ արագ կհայտնվի, որտեղ ասեմ, ասֆալտին»:

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու, ֆիզիկական ուժ չգործադրելու, դրա կիրառման սպառնալիք չներկայացնելու, հոգեբանական կամ այլ տեսակի բռնություն չգործադրելու, դրա կիրառման սպառնալիք չներկայացնելու, անձանց նկատմամբ ոտնձգության ցանկացած դրսևորումից զերծ մնալու պարտականությունները:

Հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ վարչապետն իր խոսքում անդրադարձել է հանրային նշանակություն ունեցող հարցերի և թեև գործածել է կոպիտ արտահայտություններ, սակայն դրանք գործածվել են՝ նկատի ունենալով, որ եթե իր հասցեին ՀՀ նախկին նախագահները ցանկանում են քննադատություններ հնչեցնել, ապա թող համաձայնվեն ուղիղ եթերով բանավեճի, իսկ եթե ոչ՝ լռեն և չխոսեն բանակցային գործընթացի վերաբերյալ: Ն. Փաշինյանի կողմից գործածված «պատերով կտամ», «քաղաքական դիակի մնացորդները դուրս կհանեմ» արտահայտությունները, Հանձնաժողովի գնահատմամբ, նպատակ են ունեցել արտահայտելու այն իմաստը, որ Ն. Փաշինյանը, իր գնահատմամբ, ջախջախիչ հաղթանակ կտանի նշված բանավեճի շրջանակներում: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Ն. Փաշինյանի կողմից գործածված կոպիտ արտահայտությունները իմաստային առումով լրացնում են նրա խոսքը, դրան հաղորդում են ոճական ավելի կոպիտ երանգ, ինչը կարող է բնորոշ լինել քաղաքական բանավեճի շրջանակներում կատարվող հայտարարություններին: Բացի այդ, խոսքն ուղղված է եղել քաղաքական գործիչների, որոնք ևս պարբերաբար Ն. Փաշինյանին ուղղված նույնպիսի կոպիտ տոնայնությամբ հայտարարություններ են արել, ուստի, Հանձնաժողովի գնահատմամբ, Ն. Փաշինյանի խոսքը չի անցել հանրային նշանակության հարցերի շուրջ բանավեճի շրջանակներում քաղաքական գործիչների հասցեին ուղղված իրավաչափ քննադատության սահմանները, չի կրել բացառապես վիրավորելու նպատակ, չի պարունակել խիստ անձնական բնույթի վիրավորանքներ:

Ն. Փաշինյանի մյուս խոսքի կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ այն կատարվել է հանրային նշանակություն ունեցող հարցի առթիվ, նախընտրական քարոզարշավի ժամանակաշրջանում, երբ արտահայտման

ազատության սահմանափակման հնարավորությունը հատկապես նեղ է, ինչպես նաև վերաբերել է ոչ իրավաչափ արարքի կատարման դեպքում արձագանքին, այն է՝ ընտրողների կամքին բռնացող անձանց «ասֆալտին հայտնվելուն», և թեև խոսքը կոպիտ տոնայնությամբ է, սակայն «ասֆալտին հայտնվելը» չպետք է մեկնաբանվի բառացի, այլ պետք է հասկացվի որպես պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ զգուշացում: Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ «դուրսպրծուկ» բառն արհամարհական նշանակություն ունի, որն իմաստային առումով կապակցվել է Ն. Փաշինյանի մնացած խոսքին:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված հրապարակումներով ներկայացված վարքագիծը չի պարունակել վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ, և որոշել է դրանց առթիվ չհարուցել վարույթ:

6. *«Վիլեն, իմացիր որ կողքիդ ընԿերների մեջ մի հատ ընԳեր չունեիր. Արթուր Սուքոյան», «Mamul.am» լրատվական կայք, 2 ապրիլի, 2025 թ. և «Խորտակվելուց հետո Փաշինյանը կդառնա աշխարհում միակ, բացառիկ այն «կղանքը, որը չի ելնի ջրի երես». Սուքոյան», «Yerevan.today» լրատվական կայք, 27 մարտի, 2025 թ.:*

Հրապարակումների համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի օգնական Արթուր Սուքոյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում կատարել է վիրավորական արտահայտություններ («բոլոր այն բարձրաստիճան Նիկոլի «արտաթորանքները»», «խորտակվելուց հետո (Նիկոլ Փաշինյանը) կդառնա աշխարհում միակ, բացառիկ այն «կղանքը, որը չի ելնի ջրի երես»») պարունակող գրառումներ:

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի 48-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը:

Հանձնաժողովը Ա. Սուքոյանի գործածած արտահայտությունների իմաստաբանական վերլուծությամբ արձանագրել է, որ դրանց կիրառումը մարդկանց նկատմամբ կարող է ընկալվել որպես անհարգալից և նվաստացնող համեմատություն՝ հաշվի առնելով այդ բառերի թե՛ հիմնական, և թե՛ փոխաբերական իմաստները: Հաշվի

առնելով այս հանգամանքը, այն, որ Ա.Սուքոյանի էջում նշված է, որ այն վարող անձն աշխատում է Ազգային ժողովում և որ էջը գործածվում է բացառապես հանրության հետ հաղորդակցվելու նպատակով՝ Հանձնաժողովը գտել է, որ նշված հրապարակումներով ներկայացված վարքագիծը պարունակում է վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ։

Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ գրառումներով շոշափվել են կոնկրետ անձանց իրավունքները, որոնք Հանձնաժողովին դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև բացակայել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված այլ նախապայմանները (հանրային մեծ հետաքրքրության առկայություն կամ խախտման համակարգային բնույթ) Հանձնաժողովը որոշել է դեպքերի վերաբերյալ վարույթ չհարուցել։ Հանձնաժողովն արձանագրել է, որ խախտումը կարող է կրել համակարգային բնույթ, եթե այն կատարվել է նույն պաշտոնատար անձի կողմից՝ պարբերաբար (3 և ավելի անգամ), կամ առնվազն 3 պաշտոնատար անձանց կողմից՝ մեկական անգամ, մինչդեռ Հանձնաժողովի կողմից արձանագրվել է Ա. Սուքոյանի կողմից առերևույթ խախտում պարունակող վարքագծի դրսևորման միայն 2 դրվագ։

7. *«Փոխքաղաքապետը մի ճլոտի է տվել քաղաքացուն իր վարքի համար. Թալինի քաղաքապետ», «168.am» լրատվական կայք, 15 հուլիսի, 2024 թ.:*

Հրապարակման համաձայն՝ «24News» լրատվամիջոցի հետ զրույցում Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը նշել է, որ տեղյակ է քաղաքացու նկատմամբ իր տեղակալի կողմից ենթադրյալ բռնություն կիրառելու դեպքի մասին և որ ըստ իրեն հասած տեղեկությունների՝ համայնքի ղեկավարի տեղակալն «ընդամենը մեկ ճլոտի է տվել քաղաքացուն իր դրսևորված վարքի համար»։

Հանձնաժողովը նշված հրապարակումն ուսումնասիրել էր նաև 2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում և համապատասխան փաստերի բացակայության հիմքով որոշել դեպքի առթիվ վարույթ չհարուցել։ Սակայն, Հանձնաժողովի կողմից իրականացվող մեկ այլ վարույթի ընթացքում Տ. Սափեյանը նշված հրապարակման առթիվ գրավոր ցուցմունքով հայտնել է, որ երբ լրատվամիջոցից իր հետ կապ էին հաստատել, դեռևս միջադեպի մանրամասներից տեղյակ չէր և այնպես էր հասկացել, որ քաղաքացու ոչ ադեկվատ և լկտի պահվածքի համար համայնքի ղեկավարի տեղակալը մի ապտակ է տվել նրան։

Հանձնաժողովը նշված հրապարակումը և վարույթի շրջանակներում պարզված հանգամանքները ուսումնասիրել է Կանոնագրքի համատեքստում, որի 14-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ընկալվել որպես հակաօրինական գործունեություն (գործողություն կամ անգործություն) կամ դրա խրախուսում կամ դրա

նկատմամբ հանդուրժողականություն կամ անհարգալից վերաբերմունք օրինավոր վարքագծի նկատմամբ:

Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի՝ հրապարակմամբ ներկայացված վարքագիծը պարունակում է վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ, նկատի ունենալով, որ հրապարակման համաձայն՝ Տ. Սափեյանը հրապարակային առերևույթ հանդուրժողական վերաբերմունք է արտահայտել ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու համար քաղաքացուն ապտակելու նկատմամբ, և որ այս հանգամանքը հաստատվել է նաև Տ. Սափեյանի կողմից մեկ այլ վարույթի շրջանակներում տրված ցուցմունքով: Ըստ այդմ, Հանձնաժողովը նշված դեպքի առթիվ 2025 թվականի հունիսի 24-ին հարուցել է վարույթ:

8. *«Համբա՛լ». 10 տարի անց Փաշինյանը գտե՞լ է իր երազանքի վարչապետին. ՏԵՍԱՆՅՈՒԹ», «Factor.am» լրատվական կայք, 8 մայիսի, 2025 թ., ««Վեր ընկի տեղդ, ներվերս չուտես». լարված իրավիճակ ԱԺ-ում», «Iravaban.net» լրատվական կայք, 7 մայիսի, 2025 թ., ««Ղալա՛թ կանես, կարո՞ղ ա գաս՝ թքես». նոր կադրեր՝ ԱԺ լարված իրավիճակից», «24news.am» լրատվական կայք, 7 մայիսի, 2025 թ. և ««Դուրս արի, ասեմ, արա՛». ինչպես ՔՊ-ականները Փաշինյանի «պասով» սկսեցին ագրեսիվանալ», «24news.am» լրատվական կայք, 7 մայիսի, 2025 թ.:*

Հրապարակումների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովի ութերորդ գումարման իններորդ նստաշրջանի՝ 2025 թվականի մայիսի 7-ի հերթական նիստի և նիստի ընդմիջման ընթացքում սպառնալիք և վիրավորական արտահայտություններ է հնչեցրել պատգամավորների հասցեին: Մասնավորապես, ՀՀ վարչապետը գործածել է հետևյալ արտահայտությունները՝ «Որ մամուլի հոդվածներով գնայինք, հիմա ձեզ կախաղաններ էինք հանել և Հայաստանից արտաքսել էինք ընդհանրապես:», «Մամուլի հրապարակումներով առաջնորդվեմ, սաղիդ պիտի տանեմ լցնեմ ԱԱԾ-ի պադվալը (...) Առաջինը դու պտի գնաս ու դու կգնաս», «նստեք տեղներդ, ձեններդ կտրեք», «վեր ընկի տեղդ»: Նշված միջադեպին հաջորդած ընդմիջման ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ազգային ժողովի պատգամավորների միջև շարունակվել է վիճաբանությունը, որի ընթացքում լսվել են ՀՀ վարչապետի կողմից հնչեցված հետևյալ արտահայտությունները. «(...) Վեր ընկի տեղդ, արա, համբալի մեկը, համբալի մեկը»:

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու, ֆիզիկական ուժ չգործադրելու, դրա կիրառման սպառնալիք

չներկայացնելու, հոգեբանական կամ այլ տեսակի բռնություն չգործադրելու, դրա կիրառման սպառնալիք չներկայացնելու, անձանց նկատմամբ ոտնձգության ցանկացած դրսևորումից զերծ մնալու պարտականությունները:

Հանձնաժողովն իրականացրել է ՀՀ վարչապետի գործածած արտահայտությունների իմաստաբանական վերլուծություն՝ եզրակացնելով, որ դրանք իրենց բնույթով առերևույթ վիրավորական են: Հանձնաժողովն արձանագրել է, որ անգամ քաղաքական բանավեճի շրջանակներում առերևույթ վիրավորական արտահայտությունների հնչեցման հանգամանքը բավարար է Կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի առերևույթ խախտման առկայությունն արձանագրելու համար: Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ ՀՀ վարչապետի խոսքը պարունակել է Կանոնագրքի 39-րդ կետի առերևույթ խախտման հատկանիշներ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը նշված դեպքի առթիվ 2025 թվականի մայիսի 15-ին հարուցել է վարույթ:

Հարկ է նկատել, որ նշված միջադեպի առնչությամբ Հանձնաժողովը 2025 թվականի մայիսին նաև դիմում է ստացել Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանից: Միաժամանակ, նկատի ունենալով, որ դիմումի առարկան նույնացել է Հանձնաժողովի կողմից արդեն իսկ հարուցված վարույթի առարկայի հետ, Հանձնաժողովը դիմումի հիման վրա նոր վարույթ չի հարուցել՝ այդ մասին ծանուցելով Թ.Թովմասյանին:

9. *«Նիկոլ Փաշինյանը շարունակում է հակաեկեղեցական քարոզչությունը», «Aravot.am» լրատվական կայք, 30 մայիսի, 2025 թ. և «Կոնսենսուս ունենք՝ սրբապիղծ «սրբազանների» հարցը պետք է լուծել. վարչապետն անդրադարձել է աղմուկ հանած գրառմանը», «Հայկական ժամանակ» լրատվական կայք, 2 հունիսի, 2025 թ.:*

Հրապարակումների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում կատարել է հետևյալ գրառումը. «Սրբազան, գնա շարունակիր քեռուդ կնգան դոմփել, ինձ հետ ի՞նչ գործ ունես:»

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի 48-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային

ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը:

Հանձնաժողովն իրականացրել է գրառման մեջ գործածված «դոմփել» բայի իմաստաբանական վերլուծություն՝ արձանագրելով, որ դրա գործածումը գրառմանը հաղորդել է առերևույթ վիրավորական և խիստ կոպիտ նշանակություն:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև գրառման հանրային ընկալումը՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ գրառման կատարումը հանգեցրել է վարքագծի կանոնի առերևույթ խախտման: Ըստ այդմ, Հանձնաժողովը դեպքի առթիվ 2025 թվականի հունիսի 2-ին հարուցել է վարույթ:

Հարկ է հավելել, որ նշված հրապարակումների առնչությամբ Հանձնաժողովը 2025 թվականի հունիսին ստացել է նաև դիմում Ա. Զոհրաբյանից, որով դիմումատուն խնդրել է քննության առնել ՀՀ վարչապետի կողմից կատարված հրապարակումները վարքագծի կանոնների համատեքստում: Հանձնաժողովը քննարկելով դրանք Կանոնագրքի նորմերի ներքո, դիմումով վկայակոչված հրապարակումներից մեկով արձանագրել է վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ, այդուհանդերձ, հաշվի առնելով նույն հիմքով արդեն իսկ հարուցված վարույթի առկայությունը՝ կայացրել է նոր վարույթ չհարուցելու վերաբերյալ որոշում:

1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը

Հանձնաժողովը 2025 թվականին շարունակել է նվերների հաշվառման գործընթացի կատարելագործմանն ուղղված աշխատանքները և հաշվետու ժամանակահատվածում նախաձեռնել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը հաստատելու մասին իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 01-Ն որոշման փոփոխություններ և լրացումներ:

Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 11-ի N1-Ն որոշմամբ՝ միջազգային հարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված, նախատեսվել

է Պետական արարողակարգի ծառայության կողմից նվերների հաշվառման առավել ճկուն կարգավորումներ՝ մասնավորապես, վերջինիս գրավոր պատճառաբանված հիմնավորման առկայության դեպքում արարողակարգային նվերների վերաբերյալ Ռեեստրում առկա տվյալների չհրապարակման հնարավորություն:

Միաժամանակ, նույն որոշմամբ կատարելագործվել են նվերների հաշվառման և հանձնման գործընթացները, հստակեցվել են առանձին պետական մարմիններում՝ Հանրապետության նախագահի, վարչապետի, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակազմերում նվերների հաշվառման և հանձման գործընթացի իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձանց շրջանակը, վերջիններիս լիազորությունները, կատարելագործվել են նաև նվերների հանձնման օրինակելի ձևերը:

Հարկ է նշել, որ 2025 թվականի 1-ին կիսամյակում շարունակվել է նվերների հաշվառման գործընթացը, Հանձնաժողով են ներկայացվել նվերների հաշվառման ընդհանուր թվով 52 ձևաթղթեր, որոնցից 44 ձևաթուղթ ներկայացվել է Պետական արարողակարգի ծառայության կողմից, 8 ձևաթուղթ ներկայացվել է հանրային ծառայության և հանրայինպաշտոն զբաղեցնող անձանց կողմից: Հաշվառված նվերները հիմնականում ստացվել են ՀՀ վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, Արտաքին գործերի նախարարի, Պաշտպանության նախարարի, ինչպես նաև Գլխավոր դատախազության և Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից: Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով աջակցություն է տրամադրել նաև ստացված թվով 21 նվերի գնորոշման հարցում:



Հրապարակված ձևաթղթերին կարելի է ծանոթանալ Հանձնաժողովի կայքէջում՝
https://drive.google.com/drive/u/1/folders/1OnJ-NUHJpsMYEir9ICHgj1X4upTc6W71

1.4 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման կառուցակարգերի ներդրում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն՝ Հանձնաժողովի լիազորությունն է ապահովել անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման 38 դեպքերի վիճակագրության վարումը և հրապարակումը: Այս համատեքստում 2024 թվականին Հանձնաժողովը համագործակցություն է հաստատել Վիճակագրական կոմիտեի հետ:

Քննարկումների արդյունքում մշակվել և Հանձնաժողովի՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի N 06-Լ որոշմամբ հաստատվել է Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանական ուղեցույցը: 2024 թվականի տարեկան վիճակագրության վարման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականի դեկտեմբեր ամսին մեթոդաբանության հիման վրա մշակել և շրջանառել է էլեկտրոնային հարցաթերթեր, որի միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել հանրային իշխանության մարմիններից, այդ թվում՝ համայնքապետարաններից: 2025 թվականի առաջին կիսամյակում հավաքագրվել են 2024 թվականի տարեկան վիճակագրական տվյալները: Հարցմանը մասնակցել են պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման 83 մարմիններ: Հարցաթերթերը լրացվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ՝ 2024 թվականի հարցմանը մասնակցած գերատեսչությունների թիվը 54-ով ավելացել է: Միաժամանակ, որակական առումով ևս ստացված տվյալները նախորդ տարվա համեմատ առավել բովանդակային և ճշգրիտ են:

Վիճակագրական ամփոփ տվյալների համաձայն՝ հարցմանը մասնակցած գերատեսչությունների ճնշող մեծամասնությունը չունի վիճակագրության վարման ներքին կառուցակարգեր: Դրանք գործնականում կամ չեն վարվում կամ առանձին գերատեսչություններում վարվում են ներքին մատյանների պահման եղանակով, մի քանի դեպքում՝ նման ձևաչափերը մշակման փուլում են: Նախորդ տարվա համեմատությամբ՝ էականորեն ավելացել են բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով իրականացված քննությունները: Մասնավորապես՝ 2023

թվականին ներկայացված տվյալների համաձայն՝ հանրային իշխանության մարմիններում իրականացվել է նշված հիմքով 51 քննություն, մինչդեռ, 2024 թվականի նույն հիմքերով պայմանավորված քննությունների ընդհանուր թիվը կազմել է 142: 2024 թվականին հարցմանը մասնակցած 83 գերատեսչություններից 12-ում արձանագրվել են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման իրավակարգավորումների խախտման 143 դեպք, որից՝ 127-ը վերաբերել է վարքագծի կանոններին, 8-ը՝ շահերի բախման կարգավորումներին, 2-ը՝ նվերների ընդունման սահմանափակումներին, 6-ը՝ անհամատեղելիության պահանջներին: Արձանագրված խախտումների հիմք են հանդիսացել իրականացված օպերատիվ միջոցառումները, մոնիթորինգի արդյունքները, հանրային իշխանության համապատասխան մարմինների վերահսկողական տարբեր գործողությունները, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց կողմից ստացված դիմումները, որոշ դեպքերում՝ թեժ գծի հեռախոսազանգերը, ինչպես նաև լրատվական կայքերի հրապարակումները:

1.5 Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ավարտից հետո՝ երկու ամսվա ընթացքում, Հանձնաժողովը ներկայացնում է բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ նախորդ տարվա հաղորդումը (այսուհետ՝ Հաղորդում), որը տեղադրվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդմամբ Հանձնաժողովն ամփոփում է հաշվետու տարվա ընթացքում բարեվարքության համակարգի ամրապնդմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև ոլորտում առկա բացերը և մարտահրավերները: Այն ներկայացնում է նաև հանրային իշխանության այլ մարմինների գործունեության արդյունքում ձևավորված պրակտիկան և բարեվարքության պահպանմանն ուղղված ոլորտային ջանքերը:

2025 թվականի առաջին կիսամյակում մշակվել և հրապարակվել է Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2024 թվականի հաղորդումը, որտեղ ներկայացվում են բարեվարքության համակարգի կատարելագործման ճանապարհին առաջացած իրավական, գործառնական խնդիրները, դրանց հակազդման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ձևավորված պրակտիկան և դրա առանձնահատկությունները հանրային իշխանության առանձին մարմիններում: Հաղորդման առանձին գլուխներ ներկայացնում են բարեվարքության

տարրերի՝ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման կառուցակարգերի, վարքագծի կանոնների ոլորտում գործող իրավակարգավորումների ամփոփ վերլուծություն՝ համադրելով դրանք Հանձնաժողովի և առանձին գերատեսչությունների փորձի հետ:

Ի լրումն վերոգրյալի՝ Հաղորդման վերջում ներկայացվում է հանրային իշխանության առանձին մարմիններում կոռուպցիայի կանխարգելման, մասնավորապես՝ բարեվարքության տարրերի վերաբերյալ տարեկան վիճակագրությունը:

Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2024 թվականի տարեկան հաղորդումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/hDJ2G:

2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում

Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից հաշվետու ժամանակահատվածում 540 ծանուցումների (ռեեստրներ) հիման վրա ստացել և հայտարարագրման էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ Համակարգ) է մուտքագրել 1,492 հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ տվյալներ, որոնք վերաբերել են 2,179 փոփոխությունների:

Վերը նշված փոփոխություններից 1,067-ը եղել են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, 1,112-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Համակարգում գրանցված գործող պաշտոնատար անձանց թիվը կազմել է 6,141:

Հանձնաժողովի կողմից իրականացված իրազեկման միջոցառումների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 165 պաշտոնատար անձանց վերաբերյալ՝ նախորդ տարիների ընթացքում չներկայացված 191 տվյալ, որից՝ 95-ը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, իսկ 96-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին:

2.2 Աջակցություն հայտարարատուներին

2025 թվականի 1-ին կիսամյակում Հանձնաժողովը հայտարարագրման գործընթացի վերաբերյալ հայտարարատուներին աջակցություն է տրամադրել հետևյալ գործիքներով.

- Հայտարարագրման գործընթացի իրազեկման միջոցառումների իրականացում՝ մարզային **12** այցելություններ, ինչպես նաև առցանց **17** հանդիպումներ,
- contact@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ստացվել է շուրջ **450** հարցում,
- հեռախոսազանգերի թիվը կազմել է շուրջ **8000**,
- Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով ստացվել է **106** գրավոր հարցում:
- Հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների բջջային հեռախոսահամարներին հաղորդագրությունների միջոցով հայտարարագիր ներկայացնելու պարտականության վերաբերյալ ուղարկվել է **7988** հիշեցում:

Բոլոր այն հայտարարատուները, ովքեր չեն ստացել Համակարգ մուտք գործելու համար տվյալներ կամ ում չի հաջողվել ստացված տվյալներով մուտք գործել Համակարգ, հնարավորություն են ունեցել պահանջվող տվյալները լրացնել Հանձնաժողովի կայքում հրապարակված հղումով ներկայացված ձևաթղթում, ինչի արդյունքում լրացված տվյալների համաձայն՝ հայտարարատուներին ուղարկվել է օգտանուն և նոր գաղտնաբառ: Հաշվետու ժամանակահատվածում այս գործիքի միջոցով հայտարարատուների կողմից ներկայացվել է 350 հայտ:

2024 թվականի տարեկան հայտարարագրերի ներկայացման վերջնաժամկետով պայմանավորված՝ հեռախոսազանգերի միջոցով 17.05.2025-31.05.2024թթ. ընթացքում հայտարարատուներին աջակցություն է տրամադրվել նաև ոչ աշխատանքային օրերին, իսկ 2025 թվականի մայիսի 30-ին և 31-ին հեռախոսազանգերին պատասխանվել են մինչև ժամը 20:00-ն: Ընդ որում, հարկ է արձանագրել, որ բաց թողնված և չպատասխանված զանգերի դեպքում կատարվել են հետզանգեր:

2.3 Ներկայացված հայտարարագրեր

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ներկայացվել է 17,523 հայտարարագիր, որից 7,142-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց, իսկ 10,381-ը՝ նրանց ընտանիքի անդամների կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագիրն էլեկտրոնային համակարգով ներկայացնելու անհնարինությամբ պայմանավորված ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով ներկայացվել է 94 հայտարարագիր:

«Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատուների կողմից հայտարարագրերի ներկայացման վիճակագրությունը նախորդող համապատասխան ժամանակահատվածների համեմատությամբ ներկայացված է ստորև.



Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ 2024 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն են ունեցել 6,192 պաշտոնատար անձինք, որոնցից 6,170-ը ներկայացրել են 2024 թվականի տարեկան հայտարարագրերը, իսկ մնացած 22 պաշտոնատար անձանց չներկայացրած

հայտարարագրերի վերաբերյալ կատարվել են համապատասխան գործողություններ: Վերոնշյալ 22 պաշտոնատար անձանցից 16-ը համայնքի ավագանու անդամներ են:

2023 թվականի նույն ժամանակահատվածի հետ համեմատած պաշտոնատար անձանց կողմից ներկայացման ենթակա և չներկայացված տարեկան հայտարարագրերի թիվը նվազել է 92.81 %-ով, իսկ 2024 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 80.86 %-ով: Պաշտոնատար անձանց կողմից տվյալ տարի ներկայացման ենթակա տարեկան հայտարարագրերի չներկայացման միտումները 2023-2025թթ. 1-ին կիսամյակներում ներկայացված են ստորև.



Այլ է վիճակագրությունը հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից տարեկան հայտարարագրերի չներկայացման դեպքերում: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից չներկայացված 2024 թվականի տարեկան հայտարարագրերը կազմել են 480: 2023 թվականի նույն ժամանակահատվածի հետ համեմատած տարեկան հայտարարագրերի չներկայացման դեպքերը ընտանիքի անդամների դեպքում նվազել են 73.21 %-ով, իսկ 2024 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 57.96 %-ով:



Մշտադիտարկման արդյունքում Հանձնաժողովը հեռախոսազանգերի միջոցով ծանուցել է հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամներին՝ հայտարարագրեր ներկայացնելու իրենց պարտականության մասին ինչպես ընթացիկ տարվա, այնպես էլ նախորդ տարիներին ներկայացման ենթակա հայտարարագրերի առնչությամբ, մասնավորապես կատարելով շուրջ 5,000 հեռախոսազանգ՝ հայտարարատուներին տեղեկացրել է իրենց չներկայացրած հայտարարագրերի մասին:

Հարկ է նաև նշել, որ վերոնշյալ գործողություններից զատ Հանձնաժողովը այլ գործառույթների իրականացման շրջանակում հայտարարագրերի չներկայացման դեպքերով ուղարկել է 167 գրավոր ծանուցումներ, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով գործող հայտարարատու պաշտոնատար անձանց՝ 1984 գրավոր ծանուցումներ:

Հանձնաժողովը նաև ապահովել է ներկայացման ենթակա՝ սակայն նախորդ ժամանակահատվածներում չներկայացված հայտարարագրերի հավաքագրումը, որի արդյունքում հավաքագրվել է նախորդող տարիների ընթացքում չներկայացված 2,396 հայտարարագիր, որոնցից 250-ը ներկայացվել են պաշտոնատար անձանց կողմից, իսկ 2,146-ը՝ պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների:

Իրականացված վարչարարության արդյունքում մեծամասամբ ներկայացվել են պահանջվող հայտարարագրերը մինչև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ավարտը:

Մյուս դեպքերում, երբ Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա և մինչև գործի քննության ավարտը հայտարարատուները չեն ներկայացրել օրենքով պահանջվող հայտարարագրերը, Հանձնաժողովը կայացրել է վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ: Նման որոշումների՝ անբողոքարկելի դառնալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, օրենքով պահանջվող հայտարարագրերը չներկայացնելու հիմքով Հանձնաժողովը գործի նյութերն ուղարկել է Գլխավոր դատախազություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան գործողություններն իրականացնելու համար: Նշված հիմքով Գլխավոր դատախազություն ուղարկված գործերի թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է **13**:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրերն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու առնչությամբ հարուցված վարույթներից եզրափակվել են 158-ը: Դրանից 2-ը եզրափակվել է 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ: 156 գործերով համապատասխան հայտարարատու անձանց հայտարարվել է բանավոր դիտողություն՝ կարճելով գործերի վարույթը արարքի նվազ նշանակության հիմքով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին վարույթները:

Այս առնչությամբ, անհրաժեշտ է ընդգծել, որ Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատն ուղղված է առաջին հերթին կանխարգելելու իրավախախտումները, և ոչ թե կիրառել տույժեր: Այս համատեքստում Հանձնաժողովը վարչական տույժը դիտարկում է որպես ծայրահեղ միջոց և այն կիրառում է բացառիկ դեպքերում, երբ կանխարգելման մեխանիզմները չեն ապահովում օրենսդրի նպատակների իրագործումը: Նման մոտեցումը միտված է խթանել հայտարարատուների իրավագիտակցությունը և խուսափել պատժամիջոցների գերակշռող կիրառությունից, ինչը համահունչ է նաև Հանձնաժողովի լիազորությունների բուն էությանը:

2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

2025 թվականի առաջին կիսամյակում ստացվել է հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 523 դիմում, որից 404 դիմումը ստացվել է հայտարարատու պաշտոնատար անձանց, իսկ 119-ը՝ նրանց ընտանիքի անդամների կողմից: Ներկայացված 523 դիմումներով նախատեսվել է փոփոխություն կատարել ընդհանուր 1,033 հայտարարագրերում:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովն ապահովել է դիմումների ընթացքը, որի արդյունքում.

- 347 դիմումներ, որոնք վերաբերել են 704 հայտարարագրերում փոփոխություններ կատարելուն բավարարվել են. փոփոխությունները կատարվել են, ստուգվել և հրապարակվել,
- 4 դիմումով ներկայացված տվյալները հայտարարագրման ենթակա տվյալներ չհանդիսանալու պատճառով վերադարձվել են դիմումատուներին,
- 5 դիմումներ, որոնք վերաբերել են 11 հայտարարագրերում փոփոխություններ կատարելուն, մերժվել են փոփոխվող տվյալների՝ Հանձնաժողովին այլ կերպ հայտնի դառնալու հիմնավորմամբ: Մասնավորապես, որոշ դեպքերում մամուլի մշտադիտարկումների արդյունքում կամ սեփական նախաձեռնությամբ փոփոխման ենթակա հայտարարագրերը գտնվել են Հանձնաժողովի ուսումնասիրության ներքո, իսկ որոշ դեպքերում դրանք հանդիսացել են արտավարութային փաստաթղթեր,
- 167 դիմումներ, որոնք վերաբերել են 312 հայտարարագրերում հայտարարագրված տվյալների փոփոխության՝ ստուգման փուլում են

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

Հաշվետու ժամանակահատվածում **ԶԼՄ** մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված հրապարակումներում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների հիման վրա նախաձեռնվել են

ուսումնասիրություններ: Միաժամանակ, շարունակվել են դրան նախորդող ժամանակահատվածում նախաձեռնված ուսումնասիրությունները: Արդյունքում հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 24 ԶԼՄ հրապարակման հիման վրա նախաձեռնված ուսումնասիրություն: Վերոնշյալից բացի Հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից իրականացված՝ անհամատեղելիության պահանջների 2024 թվականի մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել և Հայտարարագրերի վերլուծության վարչությանն է փոխանցվել համապատասխան հայտարարատուների շահերի հայտարարագրերում, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված հայտարարագրերի այլ բաժիններում առերևույթ սխալ կամ ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման դեպքերը:

Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են **116** հայտարարատուների (76 պաշտոնատար անձ և ընտանիքի 40 անդամ) **352** հայտարարագրերի համապատասխան տվյալների ստուգումներ, որոնց արդյունքում՝

1. **77** դեպքով հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելը, Հանձնաժողովի կասկածների փարատված լինելու հանգամանքը, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատուներին առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումներ,
2. **11** դեպքով Հանձնաժողովը որոշել է իրականացնել հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծություն (համալիր վերլուծություն),
3. **24** դեպքով նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ, որոնցից 24-ն էլ եզրափակվել են հաշվետու ժամանակահատվածում: Եզրափակված վարույթներից **11**-ի դեպքում կիրառվել են 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժեր, **4**-ի դեպքում հայտարարվել է բանավոր դիտողություն կարճելով վարչական իրավախախատման վերաբերյալ վարույթները՝ հիմք ընդունելով իրավախախատման նվազ նշանակությունը, **7**-ի դեպքում ընդունվել են վարչական վարույթները կարճելու որոշումներ՝ պայմանավորված վարչական իրավախախատման դեպքի բացակայությամբ, իսկ **1** դեպքով որոշում չի կայացվել՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցությամբ,

4. **2** դեպքով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հանձնաժողովում իրականացվում է այդ հայտարարատուների հայտարարագրերի վերլուծություն, ուսումնասիրության արդյունքները ներառվել և քննարկվել են հայտարարագրերի վերլուծության շրջանակում:

Ընթացիկ այլ ուսումնասիրությունների առնչությամբ հայտարարատուներից հայցվել են պարզաբանումներ, որոնք դեռևս չեն ստացվել կամ քննարկման փուլում են:

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից իրականացվող մի շարք պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծության ընթացքում վերհանված ռիսկերի հիման վրա Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 8-ին ընդունել է *«Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա եկամուտների հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու մասին»* N 01-L որոշումը, որով հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ է սահմանել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում պետական պաշտոն զբաղեցնող անձանց՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի՝ Եկամուտների հայտարարագրերը և դրա հիման վրա իրականացրել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում պետական պաշտոն զբաղեցնող անձանց 2023 թվականի՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի՝ Եկամուտների հայտարարագրում հայտարարագրված՝ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտների վերլուծություն:

Վերոնշյալ որոշման հետ մեկտեղ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի՝ *«Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին»* թիվ N 02-Լ, Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 29-ի՝ *«Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին»* N 01-Լ որոշումների, ինչպես նաև ԶԼՄ հրապարակումների հիման վրա նախաձեռնված համապատասխան անձանց հայտարարագրերի վերլուծությունների իրականացման գործընթացը:

Իրականացված վերլուծությունների արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է **120** հայտարարատուների **519** հայտարարագրերի վերլուծություն, որից՝

1. **102** հայտարարատուների **412** հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է՝ գույքային դրության արժանահավատության վերաբերյալ կասկածները փարատվելու (այդ թվում՝ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության) հանգամանքով, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված: Վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատու անձանց առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում, ընդ որում՝
   1.1 **50** հայտարարատուների **141** հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է և հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, ինչպես նաև որոշ դեպքերով արձանագրված անհամապատասխանությունների՝ Հանձնաժողովի նախադեպային որոշումների համաձայն նվազ նշանակության իրավախախտում հանդիսանալու փաստը,
   1.2 **52** հայտարարատուների **271** հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է և հայտարարատուներին առաջարկվել է համապատասխան հայտարարագրերում ուղղում կատարելու համար դիմում ներկայացնել Հանձնաժողով՝ հաշվի առնելով վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելու հանգամանքը,
2. **1** անձի նկատմամբ նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ,
3. **17** հայտարարատուի առնչությամբ **6** հաղորդում է ներկայացվել Գլխավոր դատախազություն:

Գլխավոր դատախազություն ուղարկված հաղորդումներից առաջինը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում անկախ պետական մարմնի նախկին անդամի և նրա ընտանիքի 4 անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված և վերլուծության առարկա հանդիսացող հայտարարագրերում հայտարարագրված կանխիկ դրամական միջոցների ծագման աղբյուրների առնչությամբ վերջիններից հայցված և ստացված պարզաբանումների գնահատումների արդյունքում

Հանձնաժողովի կասկածների չփարատվելուն, ինչպիսի հիմքով էլ համապատասխան հաղորդումը 5 հայտարարատուի առնչությամբ ուղարկվել է Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում 3 դրվագով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-ին հոդվածի հիմքով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածին):

Հաղորդումներից երկրորդը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում դատավորի և նրա կնոջ կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված այն կասկածին, որ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձին պատկանում է տրանսպորտի միջոց, որը ձեռք է բերվել պաշտոնատար անձի անունից, օգտին կամ հաշվին, կամ որը փաստացի տիրապետվում է հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձին պատկանում է տրանսպորտի միջոց, որը ձեռք է բերվել պաշտոնատար անձի անունից, օգտին կամ հաշվին, կամ որը փաստացի տիրապետվում է հայտարարատու պաշտոնատար անձի կողմից: Այս վերլուծության ընթացքում Հանձնաժողովի կասկածները փարատելու նպատակով Հանձնաժողովը այդ անձից պահանջել է Հանձնաժողով ներկայացնել իրավիճակային հայտարարագիր, որի վերլուծության արդյունքում Հանձնաժողովի մտահոգությունները չեն փարատվել: Ավելին, հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերում առկա տվյալների վերլուծությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ առկա է գույքի փոփոխության՝ օրինական եկամուտներով չհիմնավորվելու դեպք, որը նույնպես ներառվել է հաղորդման մեջ: Միաժամանակ, դատավորի նկատմամբ Հանձնաժողովը հարուցել է կարգապահական վարույթ և դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ:

Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ և 444-րդ հոդվածների հիմքով: Նկատի ունենալով դեպքի առթիվ քրեական վարույթ նախաձեռնված լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովը միջնորդել է Բարձրագույն դատական խորհրդին՝ կասեցնելու կարգապահական վարույթի քննությունը մինչև քրեական գործի հանգուցալուծումը, որը բավարարվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Հաղորդումներից երրորդը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում դատավորի և նրա կնոջ կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված այն կասկածներին, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից նվիրատվությամբ ստացված դրամական միջոցների ծագման աղբյուրները կասկածելի էին և չեն հիմնավորվել ներկայացված պարզաբանումներով, միաժամանակ հայտարարատուի՝ կանխիկ դրամական մուտքերը բանկային հաշիվներին չեն հիմնավորվել ստացված եկամուտներով և հայտարարագրված դրամական միջոցներով, արդյունքում գույքերի փոփոխությունը չի հիմնավորվել օրինական եկամուտներով: Նկատի ունենալով, որ արձանագրվածը չի առնչվել դատավորի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերին, հետևաբար և դատավորի վարքագծին, ուստի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի հիմքով:

Հաղորդումներից չորրորդը վերաբերել է մամուլի հրապարակման հիման վրա համայնքի ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված կասկածներին առ այն, որ բանկային հաշիվների շարժերը չէին համապատասխանում հայտարարագրված եկամուտներին, գույքերի փոփոխությունը չէր հիմնավորվում հայտարարագրված դրամական միջոցներով և օրինական եկամուտներով: Վերը նշված և այլ հարցերի շուրջ Հանձնաժողովի կողմից հայցվել են պարզաբանումներ, որոնք չենք ներկայացվել Հանձնաժողով, ինչը արդյունքում Հանձնաժողովի կասկածները չեն փարատվել և գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի հիմքով:

Հաղորդումներից հինգերորդը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում դատավորի և նրա ընտանիքի կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված այն կասկածներին, որ հայտարարատուի և նրա ընտանիքի անդամի նվիրատվությամբ ստացված անշարժ գույքերի ծագման աղբյուրները կասկածելի էին և չեն հիմնավորվել ներկայացված փաստարկներով, ինչպես նաև ընտանիքի անդամի հայտարարագրված դրամական միջոցների ծագման

աղբյուրները ևս չեն հիմնավորվել ներկայացված փաստարկներով, որի արդյունքում Հանձնաժողովի կասկածները չեն փարատվել և ներկայացվել է հաղորդում:

Հաղորդումներից վեցերորդը վերաբերել է ՁԼՄ հրապարակման հիման վրա Հանձնաժողովի կողմից նախաձեռնված պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծությանը, որի ընթացքում Հանձնաժողովի մոտ առկա հիմնական կասկածն այն էր, որ առկա կանխիկ դրամական միջոցները չեն հիմնավորվում հայտարարագրված օրինական եկամուտներով, ինչի առնչությամբ հայցվել էր պարզաբանումներ և բանկային հաշիվների քաղվածքներ, որոնք ամբողջությամբ Հանձնաժողով չէին ներկայացվել: Արդյունքում, ձևավորված կասկածների և պահանջվող պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ոչ ամբողջական ծավալով տրամադրմամբ պայմանավորված գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի հաղորդման հիման վրա քրեական վարույթ չի նախաձեռնվել, իսկ այլ վարույթ նախաձեռնված լինելու մասին Հանձնաժողովը տեղեկություններ չունի: Քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ կազմված արձանագրությունը Հանձնաժողովի կողմից չի բողոքարկվել, քանի որ Հանձնաժողովի գնահատմամբ հարցի լուծումը պահանջում է օրենսդրական փոփոխությունների իրականացում: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովը նախաձեռնել է իրավասու մարմինների հետ աշխատանքային քննարկումներ:

3.3 Հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքում իրականացված վարույթներ

Հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ 83 վարույթներից եզրափակվել են 79 վարույթներ, որոնցից 29-ը եզրափակվել են 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ, 50 վարույթ եզրափակվել է բանավոր դիտողություն հայտարարելով և արարքի նվազ նշանակության հիմքով գործի վարույթը կարճելու մասին որոշման ընդունմամբ, 6 վարույթ եզրափակվել է կարճման որոշումների ընդունմամբ՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով, իսկ 3 վարույթով որոշում չի կայացվել՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցությամբ:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունների շրջանակում կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների ստուգումն ու աուդիտը, դրանց հրապարակումն ու միջազգային լավագույն փորձի ներգրավմամբ էլեկտրոնային գործիքակազմերի մշակումն ուղղված են քաղաքական ֆինանսների թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և քաղաքական գործընթացներում հավասար մրցակցային պայմանների ապահովմանը: Սույն բաժնում ամփոփված են 2025 թվականի առաջին կիսամյակում իրականացված հիմնական աշխատանքները՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության ոլորտում: Մասնավորապես՝ ներկայացված են կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունքները, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքը և դրա իրավական հիմքերը, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների հրապարակման և ներկայացման գործընթացը, ինչպես նաև համակարգային բարեփոխումների շրջանակում ներդրված էլեկտրոնային լուծումները:

4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

Մինչ օրենսդրական փոփոխությունները առկա իրավական կարգավորումներում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք կապված էին կուսակցությունների հաշվետվությունների հրապարակման գործընթացի հետ.

- Կուսակցությունների կողմից Հանձնաժողովին են ներկայացվել հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից (azdarar.am) գեներացված թվեր պարունակող փաստաթղթեր, որոնց հիման վրա հնարավոր չէր ճշգրտորեն ստուգել՝ արդյոք հաշվետվությունն իրականում հրապարակվել է, թե ոչ:
- Հանձնաժողովի համար խնդրահարույց էր հրապարակման փաստի ստուգումը որոնման գործիքի միջոցով, քանի որ չէին կիրառվում վերնագրերի հրապարակման միասնական չափանիշներ, որոնումը հաճախ չէր տալիս հստակ արդյունքներ:
- azdarar.am կայքում հաշվետվությունները հրապարակման ներկայացնելիս չէր ստուգվում, թե արդյոք հաշվետվությունը համապատասխանում է ԿԿՀ-ի

սահմանած ձևաչափին, չէր վերահսկվում, որ հրապարակվող նյութերում չլինեն հրապարակման ոչ ենթակա անձնական տվյալներ:

Հաշվի առնելով վերոգրյալ խնդիրները՝ կատարվել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Համաձայն որոնց՝ 2024 թվականին ընդունվել են ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքը: Վերոնշյալ օրենսդրական կարգավորումները ուժի մեջ են մտել 2025 թվականի ապրիլի 1-ից: ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝

- Կուսակցությունները պարտավոր են հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը,
- նվազեցվել է կուսակցությունների վարչական բեռը, մասնավորապես կուսակցությունները այլևս չեն ներկայացնի աուդիտի կազմակերպման համար նախնական տեղեկություններ, ինչպես նաև չեն հրապարակի իրենց հաշվետվությունները azdarar.am կայքում, այլ Հանձնաժողովը կապահովի դրանց հրապարակումը Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.cpcarmenia.am-ում, հատուկ ձևավորված առանձին բաժնում տեղադրելու միջոցով,
- փոփոխվել են կուսակցությունների կողմից ստացվող նվիրատվությունների առավելագույն չափերը, ներդրվել են նպատակային ֆինանսավորման տրամադրման նոր մեխանիզմներ:

Հարկ է նաև նշել, որ Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում ամբողջությամբ ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև կուսակցության պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացման բաղադրիչը, ինչը հնարավորություն է տալիս ամբողջ գործընթացն իրականացնել Հանձնաժողովի էլեկտրոնային հարթակի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով:

Այս փոփոխությունները ստեղծում են ավելի թիրախային և հասցեական կարգավորումներ, որոնք թույլ են տալիս ավելի արդյունավետ վերահսկել կուսակցությունների ֆինանսական գործունեությունը և ապահովել քաղաքական գործընթացների թափանցիկությունը:

Հանձնաժողովն ընդգծում է, որ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացում Հանձնաժողովի մանդատից բխող գործառույթների պատշաճ իրականացման համար արդիական են մնում

կուսակցություններին նվիրատվություններ կատարած անձանցից իրավիճակային հայտարարագրեր պահաջելու, ինչպես նաև հաշվետվության ստուգման ժամանակ օպերատիվ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով իրավասու մարմիններին դիմելու լիազորությունների օրենսդրությամբ ամրագրման հարցերը:

Իրականացվել են նաև վերը նշված օրենքների փոփոխություններից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման ուղղությամբ աշխատանքներ, մասնավորապես՝

- «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 02-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը շրջանառվել է և ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետահիրավական փորձաքննության:
- Նախաձեռնվել և մշակվել է նաև ««Կուսակցության տարեկան հաշվետվության լրացման և հրապարակման, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու» կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը:
- Մշակվել է «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգը սահմանելու մասին» որոշման նախագիծը:

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ

Համաձայն *«Կուսակցությունների՝ հաշվետու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով ներկայացվող անհրաժեշտ տեղեկությունների ցանկը, ձևաթուղթը և ժամկետները սահմանելու մասին»* N 01-Ն որոշման՝ 57 կուսակցություն Հանձնաժողով է ներկայացրել տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բացի պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններից, հաշվետու տարվա ընթացքում կուսակցության մուտքերը կամ ելքերն օրենքով սահմանված նվազագույն

աշխատավարձի քսանհինգհազարապատիկը գերազանցելու հիմքով աուդիտի ենթակա են նաև՝ «Հայաստանի Հանրապետական» և «Հայրենիք» կուսակցությունների տարեկան հաշվետվությունները։

Վերը նշված 7 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտի գործընթացը կազմակերպելու նպատակով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ին ուղարկված՝ անդամակցող աուդիտորական կազմակերպություններից գնային առաջարկ ներկայացնելու մասին գրությանն ի պատասխան աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները՝

N	Կուսակցության անվանումը	Աուդիտորական կազմակերպության անվանումը	
		ԹՄ ԱՈՒԴԻՏ	ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ
1	«Վերածնվող Հայաստան»	1,680,000	1,500,000
2	«Հայ յեղափոխական դաշնակցություն»	3,490,000	3,000,000
3	«Բարգավաճ Հայաստան»	2,400,000	1,800,000
4	«Հանրապետություն»	1,680,000	1,800,000
5	«Քաղաքացիական պայմանագիր»	7,200,000	6,300,000
6	«Հայաստանի հանրապետական կուսակցություն»	4,200,000	4,200,000
7	«Հայրենիք»	2,160,000	1,800,000

Ներկայացված առաջարկների հիման վրա սահմանված մեթոդաբանությամբ որոշվել է յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի պայմանագրի գինը և 2025 թվականի փետրվարի 17-ին Հանձնաժողովի կայքում հրապարակվել է *«Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի հայտարարությունը հաստատելու մասին»* որոշումը, համաձայն որի՝ Հանձնաժողովը հայտարարել է մրցույթ՝ վերոնշյալ 7 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով։

Նշված մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն և «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ն:

Ներկայացված մրցութային առաջարկների բացման և գնահատման արդյունքում յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի իրականացման համար վիճակահանության փուլ են անցել 2 աուդիտորական կազմակերպություններ, որոնց միջև տեղի ունեցած հրապարակային վիճակահանության արդյունքում սահմանվել են վերջնական հաղթող կազմակերպությունները և վերջիններիս առաջարկվել է կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր, ինչի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև.

N	Աուդիտորական կազմակերպության անվանում	Կուսակցության անվանում	Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)
1	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	Վերածնվող Հայաստան	1,590,000
2	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	ՀՅԴ	3,245,000
3	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	ԲՀԿ	2,100,000
4	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	Հանրապետություն»	1,740,000
5	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	Քաղաքացիական պայմանագիր	6,750,000
6	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	Հայրենիք	1,980,000
7	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	ՀՀԿ	4,200,000

Հաշվետու ժամանակաշրջանում աուդիտորական կազմակերպությունների կողմից ստացվել են պետական ֆինանսավորման և պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունները, որոնք հիմք են հանդիսացել պետական ֆինանսավորման ենթական կուսակցությունների 2024 թվականի հաշվետվությունների ստուգման համար: Աուդիտորական եզրակացությունները հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղումով:

4.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի համատեքստում Հանձնաժողովն իրականացրել է պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգումը, ինչի շրջանակներում անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր են հայցվել կուսակցություններից, որոնք համադրվել են պետական մարմիններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև կուսակցությունների տարեկան հաշվետվություններով ներկայացված տվյալների հետ: Ստուգման համար, ի թիվս վերոնշյալի, հիմք են հանդիսացել նաև աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունները:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 23-ի «Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգելու մասին» որոշմամբ կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգվել է 60 (վաթսուն) օրով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Վերածնվող Հայաստան» կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացությունն ստացվել է 2024 թվականի ապրիլի 22-ին, որից հետո տարեկան հաշվետվության ստուգման ընթացքում ինչպես պետական մարմիններից, այնպես էլ կուսակցությունից տեղեկություններ և փաստաթղթեր են պահանջվել, միաժամանակ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացություններն ստացվել են 2025 թվականի մայիսի 5-ին, որից հետո ևս տարեկան հաշվետվությունների ստուգումն իրականացնելու նպատակով ինչպես պետական մարմիններից, այնպես էլ կուսակցություններից տեղեկություններ և փաստաթղթեր են հայցվել, որոնցից վերջին տեղեկատվությունը ստացվել է 2025 թվականի մայիսի 15-ին, իսկ պետական մարմիններից և կուսակցություններից հայցված մեծածավալ տեղեկատվության ուսումնասիրման համար «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) սահմանված 30-օրյա ժամկետը բավարար չէ ստուգումն ավարտելու համար:

Սահմանադրական օրենքի համաձայն՝ *Պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունում է որոշում, որի մասին ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, տեղեկացնում է Հայաստանի*

Հանրապետության կառավարությանը, իսկ Սահմանադրական օրենք *26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (…) Յուրաքանչյուր տարվա համար պետական ընդհանուր ֆինանսավորումը կուսակցություններին տրամադրվում է կիսամյակային սկզբունքով, բայց ոչ շուտ, քան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումը (…), իսկ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների պետական ֆինանսավորումը (պետական սուբսիդավորումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող և եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը (…):*

Հաշվի առնելով Օրենսդրի՝ կուսակցությունների պետական ֆինանսավորման տրամադրման վերը նշված նպատակը՝ Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 3-ին վարչապետի աշխատակազմ և ազգային ժողով ուղարկված գրությամբ առաջարկել է պետական ֆինանսավորման ենթակա կուսակցություններին հատկացվող պետական ընդհանուր ֆինանսավորման կեսը տրամադրել կուսակցություններին՝ ապահովելով այդ ֆինանսավորման տրամադրման կիսամյակային սկզբունքը, իսկ պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության, ինչպես նաև կուսակցությանը տրվող պետական ֆինանսավորումը նվազեցնելու հիմքերի մասով Հանձնաժողովը նշել է, որ անդրադարձ կկատարվի կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ավարտից հետո:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացն ընթացքի մեջ է:

4.4 Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ուսումնասիրություն՝ պարզելու կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունները Սահմանադրական օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով ներկայացնելու՝ պահանջների պահպանվածությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 123 կուսակցություններից Հանձնաժողով չեն ներկայացվել 12 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունները, ուստի առերևույթ վարչական իրավախախտման դեպքի առթիվ վերջիններիս պաշտոնատար անձանց նկատմամբ նախաձեռնվել են վարչական

իրավախախտման վերաբերյալ վարույթներ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, ինչի վերաբերյալ այդ պաշտոնատար անձանց ուղարկվել են գրավոր ծանուցումներ: Վարչական իրավախախտման գործերի քննության արդյունքում կայացվող որոշումները կհրապարակվեն Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

4.5 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացում

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն համագործակցել է միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հետ, Հանձնաժողովի՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության մանդատի շրջանակներում: Համագործակցության ընթացքում իրականացվել են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում 2025 թվականի հունվարի 1-ից ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաղադրիչը և անցում է կատարվել հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի, Հանձնաժողովի և IFES-ի հետ համագործակցության շրջանակում 2025 թվականի հունվարի 15-17-ը կազմակերպվել են սեմինար-քննարկումներ՝ էլեկտրոնային համակարգը կուսակցությունների ղեկավար մարմնի անդամներին ներկայացնելու նպատակով:

Միաժամանակ, ընթացիկ փուլում են նաև 2021-2023թթ. և 2024 թվականին թղթային ներկայացված տարեկան հաշվետվությունների թվայնացման աշխատանքները:

Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի՝ էլեկտրոնային նոր համակարգի միջոցով ներկայացման բաղադրիչը նույնպես ներդրված է, որի միջոցով իրականացվել է 2024 թվականի տարեկան հայտարարագրերի ներկայացումը:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրման էլեկտրոնային համակարգ են մուտքագրվել՝ կուսակցությունների ղեկավար մարմինների 630 անդամների վերաբերյալ տվյալներ, որոնցից 437-ը ներկայացրել են կուսակցության

մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2024 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիր:

Կուսակցությունների ղեկավար կազմի կողմից հայտարարագրերը էլեկտրոնային համակարգով տրամադրելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով՝ Հանձնաժողովի կողմից 2025 թվականի մայիսի 16-ին 44 կուսակցություն ծանուցվել է *Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում սահմանված պարտավորության կատարման մասին, ըստ որի Կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը:* Ծանուցմամբ տեղեկացվել է *Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտականությունները* եռօրյա ժամկետում կատարելու անհրաժեշտության մասին, իսկ չներկայացնելու դեպքում այդ կուսակցությունների պաշտոնատար անձինք հրավիրվել են Հանձնաժողով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189.10-րդ հոդվածի զանցանքի հիմքով (այն է՝ *Պետական մարմնին (պաշտոնատար անձին) իր օրինական գործունեության համար անհրաժեշտ Սահմանադրական օրենքով նախատեսված տեղեկությունը (տվյալը) չտրամադրելը կամ սահմանված ժամկետում չտրամադրելը կամ ոչ լրիվ ծավալով տրամադրելը կամ աղավաղված տեսքով տրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:)* վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու նպատակով:

Կուսակցություններից 35-ը պատշաճ ծանուցվել են, որոնցից 28-ը ծանուցմամբ նշված ժամկետում Հանձնաժողով են ներկայացրել անհրաժեշտ տեղեկությունները, իսկ 7 կուսակցությունների պաշտոնատար անձինք պատշաճ ծանուցված լինելով հանդերձ սահմանված ժամկետում Հանձնաժողով չեն ներկայացրել կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ համապատասխան տեղեկությունները: Ուստի, 7 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ: Վերոնշյալ 7 կուսակցություններից՝ «Հայկական երազանք» և «Ամբերդ» կուսակցությունները պահանջվող տեղեկատվությունը մինչև գործի քննության ավարտը ներկայացրել են, ինչպիսի հիմքով այդ կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ հայտարարվել է բանավոր դիտողություն և ընդունվել են վարչական իրավախախատման վերաբերյալ վարույթը կարճելու մասին որոշումներ, իսկ «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ», «Հայկական վերածնունդ», «Ինքնիշխան

Հայաստան», «Հայաստանի սոցիալական արդարություն» կուսակցությունների պարագայում՝ որոշում է կայացվել վարչական տույժ կիրառելու մասին, իսկ «Նոր Վանաձոր» կուսակցության դեպքում որոշում չի ընդունվել՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցությամբ:

Կուսակցություններից 7-ի դեպքում՝ Հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում չի ստացել ուղարկված գրավոր ծանուցումը ստացած լինելու մասին հավաստումը, իսկ 2 կուսակցությունների դեպքում՝ ծանուցումը վերադարձվել է, ուստի համապատասխան ընթացակարգով ծանուցումները տեղադրվել են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ուղարկվել են համայնքների ղեկավարներին՝ առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի դրույթներով:

Կուսակցություններից երկուսի դեպքում («Համահայկական ճակատ» և «Ժողովրդավարություն և աշխատանք» կուսակցություններ) ստացվել են *Սահմանադրական օրենքի* 28.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված տեղեկությունները: Մինչդեռ մյուս 7 կուսակցությունների դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 15-րդ մասի համաձայն, ծանուցումը azdarar.am կայքում տեղադրելուն հաջորդող 5-րդ օրը, օրենքի ուժով համարվել է հանձնված (ստացված), ուստի ծանուցված համարվելուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը, կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ և նախապատրաստվել են նյութեր գործերի քննության համար:

V.ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Պետության կողմից որդեգրված հակակոռուպցիոն քաղաքականության, ինչպես նաև Հանձնաժողովին վերապահված կանխարգելման մանդատի իրականացման տեսանկյունից Հանձնաժողովի առանցքային գործառույթներից է համարվում պետական պաշտոնների հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության և դրա արդյունքում իրավասու մարմին համապատասխան խորհրդատվական եզրակացության տրամադրումը: Նշված գործընթացի շարունակական և արդյունավետ իրականացման արդյունքում հնարավոր կլինի հասնել պետական պաշտոններում հավակնող անձանց բարեվարք կերպարի ձևավորմանը, հետևողական պայքար մղելու պետական համակարգում կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով

որոշումներ կայացնելու և մի շարք այլ արատավոր գործընթացների և երևույթների դեմ:

5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովը 2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է թվով **402** անձանց բարեվարքության ուսումնասիրություն և թվով **17** անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել ընդհանուր թվով **419** խորհրդատվական բնույթի եզրակացություն:

Ներկայացված **419** եզրակացություններից՝ 364-ը եղել են դրական, 46-ը՝ բացասական: Թվով 9 անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:



Ներկայացված եզրակացություններից՝

- 1-ը վերաբերել է **Սահմանադրական դատարանի** դատավորի թեկնածուին,
- 4-ը **Բարձրագույն դատական խորհրդի** անդամի թեկնածուներին,
- 14-ը՝ **Վերաքննիչ դատարաններում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 3-ը՝ **Վճռաբեկ դատարանում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 2-ը՝ **Գլխավոր դատախազի տեղակալի,**
- 114-ը՝ **դատախազների թեկնածությունների ցուցակում** ընդգրկվել հավակնող անձանց,
- 37-ը՝ **դատախազների առաջխաղացման ցուցակում** ընդգրկվել հավակնող դատախազներին,
- 14-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **օպերատիվ-հետախուզական** գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց,
- 2-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **ինքնավար պաշտոնները** համալրել հավակնող անձանց,
- 13-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեում **ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակում** ընդգրկվել հավակնող թեկնածուներ,
- 7-ը՝ **Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի** և **նախագահի տեղակալի** թեկնածուի
- 1-ը՝ **Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի** թեկնածուին,
- 37-ը՝ **Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, առաջխաղացման** ենթակա անձանց,
- 153-ը՝ **Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների** ցուցակում ընդգրկել հավակնող անձանց
- 17-ը՝ ատեստավորման ենթակա, **ընթացիկ ուսումնասիրություն** անցնելու պարտավորություն ունեցող քննիչներին





Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ ներկայացված բարեվարքության թվով 14 եզրակացություններից 12-ը եղել են դրական, որոնցից ցուցակում ընդգրկվել է 6 թեկնածու, հաշվետվություն

ներկայացնելու պահին նշանակումներ դեռ առկա չեն, 2-ը՝ բացասական, որից թվով 1 թեկնածու ընդգրկվել է ցուցակում։



Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությունների վերաբերյալ տեղեկատվությունը, անձի նույնականացումը բացառելու նպատակով, ներկայացվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությունների թվի հետ ընդհանրացված՝ հաշվի առնելով վերջիններիս ոչ մեծ թվաքանակը։ Տեղեկատվությունը ներկայացվում է հաշվետվության ներկայացման պահին առկա տեղեկատվության համաձայն։

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, **Բարձրագույն դատական խորհրդի անդամի** և **Սահմանադրական դատարանի դատավորների** թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 8 եզրակացություններից 5-ը եղել են դրական, որոնցից 4-ը նշանակվել են պաշտոններում, թվով 3-ը բացասական, որից 1-ը չի նշանակվել պաշտոնում։ Հաշվետվության ներկայացնելու պահին մյուս թեկնածուների նշանակումների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ։





Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 114 եզրակացություններից 100-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 21-ը, որից 4-ը նշանակվել են պաշտոնում, 13-ը՝ բացասական, թեկնածուները չեն ընդգրկվել ցուցակում: Թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուն ընդգրկվել է ցուցակում, այնուհետև նշանակվել է պաշտոնում:



Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 37 եզրակացություններից 34-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 31-ը, այնուհետև թվով 23 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 2-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել է 1-ը, այնուհետև նշանակվել պաշտոնի։ Թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված։ Թեկնածուն ընդգրկվել է համապատասխան ցուցակում, այնուհետև նշանակվել է պաշտոնում։





Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 2 եզրակացություններից 1-ը եղել են դրական, թեկնածուն նշանակվել է պաշտոնում, 1-ը՝ բացասական, թեկնածուն չի նշանակվել պաշտոնում:



Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 13 եզրակացություններից 10-ը եղել են դրական, թեկնածուները ընդգրկվել են համապատասխան ցուցակներում, հաշվետվություն ներկայացնելու պահին դեռևս նշանակվել է թվով 2 թեկնածու, 3-ը՝ բացասական, թեկնածուները չեն նշանակվել համապատասխան պաշտոններում:



Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 14 եզրակացություններից 12-ը եղել են դրական, թվով 6 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 2-ը՝ բացասական, թեկնածուները չեն նշանակվել համապատասխան պաշտոններում:



Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 7 եզրակացություններից 5-ը եղել են դրական, 2-ը՝ բացասական: Բացասական եզրակացություն ստացած թեկնածուները չեն նշանակվել պաշտոններում:



Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 153 եզրակացություններից 136-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 107-ը, թվով 18 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 14-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել են 4-ը, այնուհետև թվով 2 թեկնածու նշանակվել է պաշտոնում, թվով 3 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թվով 3 թեկնածու ընդգրկվել է ցուցակում, որից 1-ը նշանակվել է պաշտոնում:



Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների և Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածուի վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 38 եզրակացություններից 31-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 29-ը, թվով 21 թեկնածու նշանակվել է պաշտոնում, 4-ը՝ բացասական, թվով 1 թեկնածուի նկատմամբ նշանակվել է ծառայողական քննություն, հաշվետվություն ներկայացնելու պահին նշանկումներ դեռ առկա չեն, թվով 3 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուներից 2-ը նշանակվել են պաշտոններում:



5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքները



2025 թվականի 1-ին կիսամյակում Հանձնաժողովն իրականացրել է Քննչական կոմիտեի թվով 17 գործող քննիչի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն, ինչի արդյունքում Քննչական կոմիտե են ներկայացվել նույնքան

խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Ներկայացված 17 եզրակացություններից 16-ը եղել են դրական, թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

Արտահերթ առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող քննիչների վերաբերյալ կազմված թվով 4 եզրակացություններից 4-ն էլ ընդգրկվել են համապատասխան ցուցակներում, 1-ը նշանակվել է պաշտոնում:

Ատեստացիայի ենթակա քննիչների վերաբերյալ կազմված թվով 10 եզրակացություններն էլ եղել են դրական, բոլորն էլ համապատասխանել են պաշտոններին:

5.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների հիման վրա ներկայացված հաղորդումներ և զեկուցագրեր

Հանձնաժողովը 2025 թվականին 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված բարեվարքության ուսումնասիրության արդյունքներով գույքային դրության առնչությամբ ձևավորված հիմնավոր կասկածի հիման վրա, Գլխավոր դատախազություն է ներկայացրել թվով 3 հաղորդում՝ գույքի ավելացման և կատարված ծախսերի՝ օրինական եկամուտներով հիմնավորվելու, ինչպես նաև Թեկնածուի կողմից կատարված գործարքների օրինականության առնչությամբ:

Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում հայտարարագրերի վերլուծության ընթացքում բացահայտված խնդիրների առնչությամբ 2025 թվականին 1-ին կիսամյակի ընթացքում կազմվել և համապատասխան ստորաբաժանում է ներկայացվել թվով 146 զեկուցագիր՝ հետագա գործընթացը կազմակերպելու նպատակով:

6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իր լիազորությունների շրջանակներում շարունակել է վարույթների իրականացումը: Հանձնաժողովի կողմից ընդհանուր առմամբ իրականացվել են թվով 255 վարույթներ: Մասնավորապես,

ՎԻՎ օրենսգրքով նախատեսված՝ 262 վարչական իրավախախատման վերաբերյալ վարույթներ.

- Հայտարարագիր չներկայացնելու հիմքով՝ 158 վարույթ,
- Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չներկայացնելու հիմքով՝ 10 վարույթ,
- Հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ լրացնելու հիմքով՝ 83 վարույթ,
- Կուսակցությունների հաշվետվությունները չներկայացնելու հիմքով՝ 3 վարույթ,
- Կուսակցությունների կողմից պաշտոնատար անձանց ռեեստրը չներակայացնելու հիմքով՝ 8 վարույթ,

Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթներից 57-ը եզրափակվել են վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ, իսկ մյուսները՝ բանավոր դիտողություն հայտարարելով և վարչական վարույթը կարճելով:

Թվով 22 վարույթներ գտնվում են ընթացիկ փուլում:

Հարկ է նշել, որ իրականացված վարույթների արդյունքում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կիրառվել է ընդհանուր առմամբ 11,400,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ, որից պետությանը հատուցվել է ընդհանուր առմամբ՝ 8,484,510 ՀՀ դրամը: Կիրառված տույժերի և պետությանը հատուցված գումարների տարբերությունը դեռևս չի բռնագանձվել, քանի որ չեն լրացել հարկադիր կատարման ուղարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետները:

Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում հարուցվել են երկու կարգապահական վարույթներ դատավորների նկատմամբ:

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից կայացված որոշումների և եզրակացությունների վերաբերյալ ՀՀ վարչական դատարանի կողմից քննության է առնվել թվով 3 դատական գործ, որոնք դեռևս գտնվում են քննության փուլում:

7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2025 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովն ամփոփել և հրապարակել է «Հայաստանում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատում» զեկույցը[1], որտեղ ներկայացված են փորձնական կիրառված մեթոդաբանության հիմքերը, գնահատման չափորոշիչները և գործիքակազմը, ինչպես նաև ձևավորված առաջարկություններ՝ բացահայտված կոռուպցիոն ռիսկերի զսպման և կանխարգելման նպատակով: Վերհանված ռիսկերը խմբավորվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. **Իրավական որոշակիության սահմանափակումներ**, մասնավորապես՝ ուղեգրման գործընթացում կիրառվող եզրույթների (օրինակ՝ «կայուն խանգարում», «տնական բուժում պահանջող հիվանդություն») ոչ միանշանակ մեկնաբանությունների, ինչպես նաև ուղեգրման վերաբերյալ որոշումների մերժման և բողոքարկման կարգի հստակեցման անհրաժեշտության առնչությամբ:
2. **Տեղեկատվության մատչելիության և իրազեկվածության սահմանափակումներ**, որոնք վերաբերում են ուղեգրման, ֆունկցիոնալության գնահատման, բողոքարկման գործընթացներին: Արձանագրվել է, որ շահառուները հաճախ տեղեկանում են իրենց իրավունքներին և կիրառվող ընթացակարգերին ոչ համակարգային աղբյուրներով, ինչը կարող է նվազեցնել գործընթացների հասանելիությունը, կանխատեսելիությունն ու վստահությունը համակարգի նկատմամբ:
3. **Թվայնացմանը զուգընթաց ի հայտ եկող գործնական խնդիրներ**, այդ թվում՝ e-disability.am հարթակի մասնակի տեխնիկական հարմարեցվածություն որոշ շահառու խմբերի համար (օրինակ՝ տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձինք), ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող զգայունության հարցեր, որոնք պահանջում են շարունակական գնահատում և վերանայում:
4. **Հանրային մասնակցության և վստահության ամրապնդման անհրաժեշտություն**, մասնավորապես ՀԿ-ների և այլ մասնագիտական կողմերի ներգրավման գործընթացում գրանցված գործնական խոչընդոտների, ինչպես նաև շահառուների շրջանում ձևավորված կոռուպցիոն ընկալումների հնարավոր ազդեցության համատեքստում:

Գնահատման արդյունքներով ձևավորվել են առաջարկներ, որոնք ներկայացվել են ոլորտային պատասխանատու մարմիններին: Ստացված արձագանքների համաձայն՝ մի շարք ուղղություններով արդեն իսկ իրականացվում են կամ նախատեսվում են միջոցառումներ, այդ թվում՝

[1] Կոռուպցիային կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայքէջ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/04/00-1.pdf

1) իրավական ակտերի վերանայում.
2) մասնագիտական վերապատրաստումների իրականացում և ընդլայնում.
3) մոնիտորինգի նոր գործիքակազմի ներդրում՝ համակարգի օբյեկտիվության վերահսկման նպատակով.
4) շահառուների համար իրազեկման արդյունավետ մեխանիզմների ստեղծում.
5) տեխնիկական հարթակների կատարելագործում՝ հաշվի առնելով ներառականության պահանջները:

2025 թվականի առաջին կիսամյակում շարունակվել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման համար անհրաժեշտ լիազորությունների և իրավական կարգավորումների սահմանման ուղղությամբ աշխատանքները: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին հարցը ընդգրկվել է ՀՀ կառավարության պետահիրավական նախարարական կոմիտեի 2025 թվականի մայիսի 2-ի նիստում: Նախագծերի փաթեթին տրվել է դրական դիրքորոշում՝ որոշ լրացումներ և փոփոխություններ կատարելու պայմանով: 2025 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողովն Արդարադատության նախարարություն է ներկայացրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման ուղղությամբ կրթություն և կարողությունների զարգացման համատեքստում կարևոր է նշել, որ 2025 թվականի ապրիլի 21-ին գործարկվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի էլեկտրոնային ուսուցման հարթակը, որտեղ ներկայացված են «Կոռուպցիոն ռիսկերի կառավարումը հանրային իշխանության մարմիններում» և «Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» դասընթացները:

Նշված միջոցառումները միտված են եղել կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգը ներդնելուն և դրա համար անհրաժեշտ հիմքեր ձևավորելուն՝ միաժամանակ նպաստելով կոռուպցիայի կանխարգելման գործընթացի արդյունավետության և հանրային վստահության ամրապնդմանը:

8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ընդլայնելով համագործակցային շրջանակը, հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է մի շարք կրթական և իրազեկման ծրագրեր՝ կազմակերպված տարբեր թիրախային խմբերի համար:

Կրթական միջոցառումների և հանրային իրազեկման հիմնական նպատակը հասարակության շրջանում կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականության ձևավորումն ու ամրապնդումն է:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովը դեռևս 2024 թվականից ակտիվ աշխատանքներ է տարել էլեկտրոնային ուսուցման հարթակի ստեղծման ուղղությամբ: Հարթակի կառուցման աշխատանքները սկսվել են 2024 թվականի օգոստոս ամսից և շարունակվել մինչև 2025 թվականի առաջին եռամսյակը, իսկ գործարկման մեկնարկը տրվել է 2025 թվականի ապրիլի 21-ից (մանրամասները տե՛ս թվայնացման բաժնում):

2025 թվականի առաջին կիսամյակի դրությամբ կայքում գրանցված է 186 անձ: Վերոնշյալ 5 դասընթացներին առկա է 352 մասնակցություն, իսկ դասընթացները հաջողությամբ ավարտել և ավարտական վկայականներ են ստացել ընդհանուր թվով 152 անձ:

Բացի ուսուցման էլեկտրոնային հարթակի գործարկումը, 2025 ապրիլի 28-ին և 29-ին Հանձնաժողովի և ՀՀ ՆԳՆ համագործակցության արդյունքում Հանձնաժողովի կողմից ՀՀ ՆԳՆ ոստիկանության, փրկարար ծառայության, միգրացիայի և քաղաքացիության ծառայության 260 ծառայողների համար իրականացվել է «Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը» թեմայով երկօրյա դասընթացը: Դասընթացի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգի տարրերը՝ անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, շահերի բախման կարգավորումները, նվերների ընդունման սահմանափակումները, ինչպես նաև հանրային ծառայողների վարքագծի կանոնները և դրանց մեկնաբանման առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվել ոստիկանության ծառայողների էթիկայի կանոններին, դրանց՝ տիպային կանոնների համապատասխանեցման անհրաժեշտությանը: Քննարկվել են հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարրերին վերաբերելի վերջին օրենսդրական փոփոխությունները և հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում ծրագրված առաջիկա գործողությունները

Հաշվի առնելով, որ երիտասարդները հանրության շարժիչ ուժն են, Հանձնաժողովն իր գաղափարներն ու ռեսուրսները մշտապես ուղղում է նաև սովորողների համար համապատասխան միջավայր ապահովող շրջանակների, այն է՝ ուսուցիչների ու ծնողների մասնագիտական և անձնական զարգացմանը, քանի որ առանց նրանց կողմից ստեղծված կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականությամբ օժտված միջավայրի, Հանձնաժողովի կողմից մշակվող կրթական ծրագրերը աշակերտների և ուսանողների համար կդառնան բացառապես գիտելիք՝ առանց համապատասխան միջավայրի:

Այս համատեքստում՝

«Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրով հանդիպումների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովում իրականացվել են թվով 4 միջոցառումներ՝ Երևանի 14 միջնակարգ դպրոցների հետ: Հանդիպումներին մասնակցել են 74 մանկավարժներ և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողներ, ովքեր ամրապնդել են կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման մշակույթի վերաբերյալ իրենց ընկալումները և գիտելիքները: Հանդիպումների ընթացքում մասնակիցները ծանոթացել են կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգին, Հանձնաժողովի գործառույթներին և լիազորությունների շրջանակին: Մասնակիցները կիսվել են կոռուպցիայի վերաբերյալ իրենց պատկերացումներով, խրախուսել նման հանդիպումների շարունակականությունը և փոխհամագործակցությունը:

Կարևորելով երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում՝ Հանձնաժողովի կողմից իրականացվել են ոչ ֆորմալ կրթական ծրագրեր տարբեր ՔՀԿ ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակներում՝ վերջիններիս առաջարկությամբ:

Մասնավորապես.

-2025 թվականի հունվարի 21-ին և 24-ին կազմակերպվել են այցելություններ Հանձնաժողով ՝ «Փի Էյչ ինթերնեշնլ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Քաղաքացիական կրթություն» ծրագրի շրջանակներում գործող «Քաղաքացիական մասնակցության ակումբ» խմբակի աշակերտների հետ, որոնց մասնակցել են Արագածոտնի մարզի Կարինի և Ծաղկահովիտի միջնակարգ դպրոցների աշակերտները: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 40 երիտասարդներ, ովքեր ծանոթացել են կոռուպցիայի վերաբերյալ ընկալումներին, կոռուպցիայի սահմանմանը, դրսևորումներին, Հանձնաժողովի ինստիտուցիոնալ շրջանակին, ինչպես նաև կազմակերպվել են երիտասարդների՝ կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների և կարողությունների զարգացմանն ուղղված խմբային աշխատանքներ և ինտերակտիվ խաղեր:

-2025թ. մայիսի 12-ին ճանաչողական այցով Հանձնաժողով են այցելել «Հոդված 3» մարդու իրավունքների դպրոցի իրավաբան ուսանողները: Վերջիններիս այցը

կազմակերպվել էր «Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ-ի նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով երիտասարդներին ծանոթացնել կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությանը, Հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին:

Հաշվետու ժամանակաշրջանում նաև կազմակերպվել են ճանաչողական այցեր Հանձնաժողով՝ բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների ուսանողների հետ.

-2025թ. մայիսի 7-ին Հանձնաժողովում հյուրընկալվել են Հայաստանի Եվրոպական համալսարանի ուսանողները, որոնք տեղում ծանոթացել են կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգին և Հանձնաժողովի գործառույթներին:

-2025 թվականի հունիսի 6-ին Հանձնաժողովում հյուրընկալվել են Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի ուսանողները: Այցի նպատակն էր ընդլայնել ուսանողների իրավագիտակցությունն ու նպաստել կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

-2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովը մշակել է «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքություն» վերտառությամբ ուսուցչի ձեռնարկը, որի նպատակն է սովորողների՝ հանրային բարեվարքության համակարգի վերաբերյալ գիտելիքների, հմտությունների և համապատասխան վերաբերմունքի ձևավորումն ու զարգացումը և ուսուցչի՝ որպես քաղաքացու գրագիտության բարձրացումը, որն ուսուցչին անհրաժեշտ է մի կողմից՝ իրազեկված լինելու և սեփական վարքագիծն արդյունավետ կառավարելու, դպրոցական համայնքում բարեվարքության մշակույթի ձևավորմանը նպաստելու, մյուս կողմից՝ ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով իր մասնագիտական պատրաստվածությունը զարգացնելու համար: Ձեռնարկն ուղղված է մանկավարժներին, ովքեր պետք է ձգտեն ոգեշնչել և պատրաստել ապագա սերունդներին՝ ակտիվորեն նպաստելու բարեվարքության, էթիկայի և բարոյականության վրա հիմնված հասարակություն ձևավորելուն, ինչպես նաև օրենքի գերակայության նկատմամբ հարգանք սերմանելուն:

Ձեռնարկի նախագիծը ներկայացվել է Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ)՝ մասնագիտական կարծիք հայտնելու նպատակով:

Մայիսի 2-ին, 26-ին Հանձնաժողովում, իսկ հունիսի 30-ին՝ Գյումրիում՝ իրականացվել են «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքություն» վերտառությամբ ուսուցչի Ձեռնարկի շուրջ քննարկումներ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների հասարակագիտության ուսուցիչների հետ՝ նպատակ ունենալով քննարկել Ձեռնարկի կիրառելիությունը հակակոռուպցիոն խմբակներում, ինչպես նաև հավաքագրել առաջարկներ և դիտողություններ՝ այն տեղայնացնելու շուրջ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի 3-րդ՝

«Հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործում» ռազմավարական նպատակի 3.5-րդ կետով նախատեսված գործողության շրջանակներում Հանձնաժողովի կողմից 2024 թվականին մշակված «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈ ոլորտում» մոդուլի մեթոդական ձեռնարկի նախագծի լրամշակումը, ինչպես նաև մոդուլի թեմաների կազմումը:

Ձեռնարկի և մոդուլի նախագիծը ներկայացվել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն (ՄԿՈՒԶԱԿ)՝ մասնագիտական կարծիք հայտնելու նպատակով:

Ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի 3-րդ ռազմավարական նպատակի 3.7 գործողության, հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակում տեղադրվել են Հանձնաժողովի կողմից ներկայացված «Ինչպես դասավանդել «Կոռուպցիա» թեման» ուղեցույցը, «Երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» սահիկաշարը, Հանձնաժողովի կողմից պատրաստված իրազեկման հոլովակները, ինչպես նաև Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և Վարքագծի կանոնագիրքը:

Այսպիսով, 2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված, և Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ անցկացված հանդիպումներին և միջոցառումներին մասնակցություն են ունեցել շուրջ 912 հանրային ծառայողներ, որոնցից 152-ը՝ E-learning կրթական հարթակով վերապատրաստում անցածները, Երևան քաղաքի և մարզերի շուրջ 16 դպրոցների 70 մանկավարժներ և 23 ծնողներ, բուհերի, ՄԿՈՒ հաստատությունների և դպրոցների շուրջ 104 ուսանողներ և աշակերտներ:

Գծապատկերը ստորև՝



8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրեր, հաղորդակցություն

Կոռուպցիայի կանխարգելման հիմնական հիմնասյուներից են համարվում հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացումն ու հաշվետվողականության ամրապնդումը: Ուստի 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) շարունակել է հետևողականորեն իրականացնել մի շարք միջոցառումներ և հանրային իրազեկման ծրագրեր:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և իրականացվել են մի շարք հանրային միջոցառումներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ և իրազեկման արշավներ: Հանձնաժողովը հյուրընկալել է ներկայացուցիչների միջազգային կազմակերպություններից, քաղաքացիական հասարակության կառույցներից և գործընկեր պետական մարմիններից: Միաժամանակ, Հանձնաժողովի

աշխատակիցները մասնակցել են տարբեր մասնագիտական դասընթացների, ինչպես նաև իրականացվել են կրթական և իրազեկման հանդիպումներ՝ ուղղված դպրոցական համայնքի ներկայացուցիչների կոռուպցիայի կանխարգելման իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:
Վերոնշյալ միջոցառումների հիմնական նպատակն է եղել ձևավորել կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականություն, ինչպես նաև ամրապնդել պետական կառավարման համակարգում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իր գործունեությունը լուսաբանելու նպատակով Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան և Լինքդինյան սոցիալական հարթակներում պարբերաբար տեղադրել է Հանձնաժողովի գործունեությանն առնչվող տեղեկատվական և վերլուծական բնույթի նյութեր:

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կայքէջում, Ֆեյսբուքյան և Լինքդինյան էջերում հրապարակված նյութերի վերաբերյալ թվային տվյալներ:



Ըստ գծապատկերի 2025 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կայքէջում հրապարակվել է 72 հոդված, 267 որոշում և եզրակացություն, Ֆեյսբուքյան էջում՝ 91, իսկ Լինքդինյան էջում 81 հրապարակում:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է նաև սերտ համագործակցությունը լրատվամիջոցների հետ, կազմակերպվել են մի շարք հարցազրույցներ, քննարկումներ, բանավեճեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրատվամիջոցների հրապարակումները ևս կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման դեպքի առերևույթ խախտման հատկանիշներ, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ նաև հայտարարագրերի վերլուծության համար, ուստի Հանձնաժողովը օրական երկանգամյա պարբերականությամբ իրականացրել է շուրջ 60 լրատվամիջոցների մամուլի մշտադիտարկում և Հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին վերաբերելի հրապարակումների վերաբերյալ կազմվել է տեղեկանք:

Հանձնաժողովը շարունակելու է գործադրել ջանքեր՝ ապահովելու համար թափանցիկ, պատասխանատու և արդյունավետ կառավարման համակարգ՝ ուղղված կոռուպցիայի դրսևորումների կանխարգելմանն ու հանրային արժեքների պահպանմանը:

9 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայտարարագրման էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ Համակարգ) շարունակվել են կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես՝ հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի, ինչպես նաև՝ «Աքռա քրեդիտ ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) աշխատակիցների հետ պետական/տեղական տեղեկատվական շտեմարանները Համակարգում ինտեգրելու նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում Համակարգում կատարվել են տեխնիկական լավարկումներ, որոնք հնարավորություն են տվել հայտարարատու պաշտոնատար անձանց առավել ավտոմատացված եղանակով լրացնել հայտարարագիրը, այդ թվում՝ անզգուշության արդյունքում սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացումը նվազագույնի հասցնելը:

Առաջին կիսամյակի ընթացքում հնարավոր է դարձել Հանձնաժողովի պաշտոնական կայքում դիտել նաև հայտարարագրերի նախորդ ռեեստրը՝ 2011-2021 թվականների վերաբերյալ:



9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ

Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում 2025 թվականի հունվարի 1-ից ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաղադրիչը և ապահովվել է կուսակցությունների՝ 2024 թվականի տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացը: Միաժամանակ ապահովվել է կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի՝ հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման գործընթացը: Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության մանդատի շրջանակում Հանձնաժողովի գործունեության թվայնացմանը միտված գործընթացներն առավել մանրամասն ներկայացված են 4.5 կետում:



9.3 Կրթական էլեկտրոնային հարթակ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովը 2024 թվականին սկսել էր էլեկտրոնային ուսուցման հարթակի (այսուհետ՝ Ուսուցման հարթակ) ստեղծման աշխատանքները: Հաշվետու տարվա ընթացքում Ուսուցման հարթակի ուղղությամբ տարվող աշխատանքներն ավարտվել են և գործարկվել 2025 թվականի ապրիլի 21-ին:

Կրթական հարթակը ծառայելու է որպես Հանձնաժողովի կրթական գործառույթի ապահովման գործիք՝ տրամադրելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական մոդուլների, թվային գրադարանի, կրթական ինտերակտիվ լուծումների հասանելիություն:

- Ուսուցման հարթակն ունի նաև «Գրադարան» բաժին, որտեղ զետեղված են ոլորտային կարևոր և օգտակար միջազգային և տեղական փաստաթղթեր, զեկույցներ ու որոշումներ, կանոնագրքեր, ընթերցանության այլ նյութեր:

Հարթակը դասընթացներ է նախատեսում ոչ միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այլև ոլորտով հետաքրքրվող ցանկացած տարիքային խմբի և մասնագիտության անձանց՝ հանրության լայն շերտերի համար: Առկա դասընթացների բովանդակությունը մշակվել է

հակակոռուպցիոն ոլորտի միջազգային լավագույն օրինակների հիման վրա՝ թույլ տալով օգտագործողին գիտելիքներ ստանալ ոչ միայն հայաստանյան պրակտիկայի, այլև միջազգային փորձի վերաբերյալ: Դասընթացները հագեցած են ոչ միայն ընթերցանության նյութերով, այլև ինտերակտիվ խաղերով, դիդակտիկ նյութերով, հարցումներով և ուսուցողական հոլովակներով:



2025 թվականի առաջին կիսամյակի դրությամբ կրթական հարթակում հասանելի են 5 թեմատիկ դասընթացներ, որոնք մշակված են հանրային ծառայողների, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար և ներառում են բարեվարքության համակարգի տարրերի, կոռուպցիոն ռիսկերի, կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության, ազդարարման, հանրային գնումներում ռիսկերի նվազեցման և կոռուպցիայի կանխարգելման այլ գործիքների վերաբերյալ կրթական մոդուլներ: Հարթակում այժմ հասանելի են հետևյալ խորագրերով դասընթացները՝

1. «Կոռուպցիա. կանխարգելման հիմնադրույթները»,

2. «Էթիկական կառավարումը և կոռուպցիայի կանխարգելումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար»,

3. «Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում»,

4. «Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում»,

5. «Շահերի բախումը որպես բարեվարքության համակարգի տարր»:



Էլեկտրոնային ուսուցման հարթակը գործում է հետևյալ հղումով՝ https://elearning.cpcarmenia.am/: Հարթակ հնարավոր է մուտք գործել՝ սեղմելով Հանձնաժողովի կայքում զետեղված «Հակակոռուպցիոն կրթություն» կոճակը:

Դասընթացների ավարտին հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները կստանան մասնակցությունը հավաստող վկայագրեր:

10 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի 1-ին կիսամյակում Հանձնաժողովը շարունակել է ակտիվ համագործակցել միջազգային գործընկերների հետ, մասնավորապես.

- Հանձնաժողովում հյուրընկալվել են ՏՀԶԿ/ՍԻԳՄԱ ծրագրի՝ Հայաստանում պետական կառավարման սկզբունքների ուղղությամբ առաջընթացի գնահատման համար ժամանած ներկայացուցիչները, որի շրջանակներում ներկայացվել է շահերի բախման, հայտարարագրման գործընթացին առնչվող իրավական կարգավորումները և Հանձնաժողովի կողմից կատարված գործողությունները:
- Հանձնաժողովում տեղի է ունեցել հանդիպում Եվրոպական միության հետ մուտքի արտոնագրերի ազատականացման առաջիկա գործողությունների ծրագրի շրջանակում հանրային անվտանգության, արտաքին հարաբերությունների և հիմնարար իրավունքների գնահատման նպատակով Հայաստանում գտնվող ԵՄ փորձագիտական առաքելության ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել է

Հանձնաժողովի գործունեությունը, ոլորտի ինստիտուցիոնալ գործիքակազմերը։

- Հանձնաժողովում է հյուրընկալվել Բաց կառավարման գործընկերության ներկայացուցիչ Պիտեր Վարգան, ում հետ քննարկվել է Հանձնաժողովի՝ բաց կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումներին վերաբերելի հարցերը։

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) համատեղ կազմակերպել են «Քաղաքական բարեվարքություն և գենդերային հավասարություն քաղաքական կուսակցություններում» աշխատաժողովը, որի ընթացքում ԺՀՄԻԳ ներկայացուցիչները ներկայացրել են կուսակցություններում վարքականոնների առնչությամբ միջազգային փորձը և առաջարկություններն ու ուղեցույցները՝ կուսակցությունների վարքականոնների, գենդերային աուդիտների և սեռերի ներկայացվածության վերաբերյալ։

2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի անդամները հանդես են եկել որպես բանախոսներ կազմակերպված տարբեր միջոցառումներին, հատկապես՝

- ԵՄ/ԵԽ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» (PGG III) 2023–2027 թթ. ծրագրի՝ Հայաստանի ղեկավար կոմիտեի երրորդ հանդիպմանը, որի ընթացքում առանձնահատուկ է գնահատվել ԵՄ-ի և ԵԽ-ի հետ համագործակցությունը, ինչպես նաև «Ներածություն կոռուպցիայի կանխարգելմանը» HELP առցանց դասընթացը, հանրային ծառայության համակարգում վարքագծի կանոնների միասնականացման համար կատարված աշխատանքները։
- Վարչապետի աշխատակազմի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն քարտուղարության և ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի (IFES) կողմից կազմակերպված՝ «Թվային ժողովրդավարություն և թափանցիկ կառավարում» թեմայով պանելային քննարկմանը, որի ընթացքում ներկայացվել է Հանձնաժողովի կողմից կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության արդյունավետության բարձրացման համար իրականացվող թվայնացման գործընթացները։

Հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովը՝ միջազգային համագործակցության շրջանակներում հրավերներ է ստացել մասնակցելու միջազգային գործընկերների կողմից կազմակերպված միջոցառումներին և հանդիպումներին, այդ թվում՝

- Մանիլայում (Ֆիլիպինների Հանրապետություն) կազմակերպված Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության (ԲԿԳ) Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային համաժողովին: Համաժողովի

շրջանակներում կայացած «Փոխգործելիություն և տվյալների օգտագործում» թեմայով պանելային քննարկմանը ներկայացվել է Հանձնաժողովին՝ էլեկտրոնային հարթակի միջոցով հասանելի դարձված տվյալները, դրանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, իրավական և պրակտիկ մարտահրավերները: Համաժողովի ընթացքում «Քաղաքականության մեջ գումարի թափանցիկության ապահովման ուղիները» թեմայով կայացած նիստին ներկայացվել է Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթը Հանձնաժողովին վերապահելու ժամանակից ի վեր թվային լուծումների միջոցով վերահսկողության արդյունավետության խթանման, ինչպես նաև թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման վերաբերյալ հարցերը:

- Համաշխարհային բանկի կողմից՝ Վաշինգտոնում (ԱՄՆ) կազմակերպված «Համագործակցություններ հանուն կոռուպցիայի դեմ պայքարի» Գլոբալ ֆորում 2025-ին, որտեղ ներկայացվել է Հանձնաժողովի գործառույթների իրականացման ընթացքում առաջացած մարտահրավերները, ինչպես նաև՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործընթացը, օրենսդրական կարգավորումները, բարեվարքությունների ուսումնասիրությունների ինստիտուտը և Հանձնաժողովի գործառույթների թվայնացման գործընթացը:
- Ստրասբուրգում (Ֆրանսիայի Հանրապետություն)՝ Եվրոպայի խորհրդի «Լավ կառավարման գործընկերություն (PGG) III. Արևելյան գործընկերության տարածաշրջանում տնտեսական հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների ուժեղացում» ծրագրի շրջանակում կազմակերպված «Կոռուպցիոն ռիսկերի քարտեզագրում. քաղված դասեր և կիրառման հնարավորություններ» թեմայով բազմաշահառու աշխատաժողովին, որի նպատակն էր նպաստել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման ոլորտում փորձի փոխանակմանը:
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի քննարկումներին, որը կենտրոնացված էր Ծրագրի՝ Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույցով առկա հանձնառությունների կատարման ուղղությամբ ՀՀ-ի կողմից իրականացված աշխատանքների և ձեռնարկված բարեփոխումների ուղղությամբ:

Բացի այդ, Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Հայաստանի արդարադատական բարեփոխումների աջակցման ծրագրի – Փուլ II» ծրագրի շրջանակներում, Հանձնաժողովը կազմակերպել է եռօրյա վերապատրաստում Հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացման նպատակով:

Վերապատրաստման նպատակն էր զարգացնել և ամրապնդել Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունները, մասնավորապես՝ հանրային ծառայողների վարքագծի կանոնների կիրարկման, անհամատեղելիության սկզբունքների և օրենքով վերապահված այլ սահմանափակումների ոլորտներում: Ուսուցման ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ինտերակտիվ կերպով քննարկելու օրենսդրական ընթացակարգերը, միջազգային և տեղական լավագույն պրակտիկաները, շահերի բախման եւ նվերների ինստիտուտի իրավակարգավորումները և դրանց կիրառումը հանրային ծառայության մեջ: